Azg Ազգ

29 ԱՊՐԻԼ 2008 ԵՐԵՔՇԱԲԹԻ 80 (3974)

Հավակնոտ, բայց իրատեսական

Այս բնորոշումն ունեցող կառավարության ծրագիրն ուղարկվեց ԱԺ հաստատմանը

ԵՐԻՏ ՄԵՐՏԻՐՈՍՅԱՆ

Կառավարությունը երեկ արտահերթ նիստ էր հրավիրել՝ հաստատելու եւ խորհրդարանի քննարկմանը ներկայացնելու համար իր գործունեության 2008-2012 թվականների ծրագիրը: Հիշեցնենք, որ նիստին լրագրողները հետեւում էին կառավարության մամուլի կենտրոնից՝ օգնյալ ռեժիմով: Ծրագրի հիմնական դրույթները ներկայացրեց էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը:

Ծրագրում կառավարության գործունեության մի քանի հիմնական գերակայություններ են հռչակված: Դրանք են ազգային անվտանգության եւ ակտիվ տնտեսական քաղաքականության միջոցով կայուն զարգացման ապահովումը, առյուծվեց ոլեական, տեղական ինքնակառավարման եւ մասնավոր հատվածի կառավարման համակարգի ձեւավորումը եւ կորպորատիվ մշակույթի ներդրումը, կրթության եւ գիտության զարգացումը եւ այդ ուղղությամբ 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելը, երկրի տարածքային համաչափ զարգացումը, Հայաստանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածությունը սոցիալական, առողջապահության, կենսաթոշակային ապահովագրության եւ մշակույթի բնագավառներում:

Վերոնշյալ 5 տարիների ընթացքում Հայաստանի կառավարությունը, իրագործելով իր հավակնոտ անվանվող ծրագիրը, ակնկալում է տարեկան ունենալ 8-10 տնտեսական (ՀՆԱ) աճ, ներդրումների առնվազն 10 տոկոս աճ, տարածքային տնտեսական անհամամասնությունների էական նվազեցում, ոչ գյուղատնտեսական զբաղվածության 10 տոկոս աճ, հարկային եկամուտների հավաքման աճ՝ ՀՆԱ նկատմամբ տարեկան 0,3-0,4 տոկոսային կետի չափով, աղքատության էական հաղթահարում՝ մինչեւ 11,2 տոկոսից ցածր ընդհանուր աղքատության մակարդակ եւ 1,6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ 2012-ին եւ այլն:

Տես էջ 3

Օդի ջերմաստիճանը 12 աստիճանով կնվազի

Ինչպես տեղեկացրեց «Հիդրոմետ» ծառայության օդերեւութաբանական կենտրոնի ոլես Ջարուհի Պետրոսյանը, ապրիլի 29-ին հանրապետությունում կպահպանվի ջերմային բարձր ֆոնը, իսկ ուր երեկոյից սկսած մինչեւ մայիսի 3-ը հանրապետությունում սպասվում են տեղումներ: Օդի ջերմաստիճանը 10-12 աստիճանով կնվազի՝ մինչեւ 23 աստիճան: Մայիսի 1-3-ը մայրաքաղաքում սպասվում է 22-24 աստիճան տաքություն՝ առավելագույնը, իսկ նվազագույնը՝ 8-10-ի սահմաններում: Լեռնային շրջաններում նույնպես կտրուկ ջերմաստիճանի նվազում կդիտվի՝ ցերեկը 14-19-ի սահմաններում, գիշերը՝ 4-9-ի: Մայիսի 1-ին եւ 2 աստիճանով ջերմաստիճանը կնվազի՝ 12-17 ու առանձին վայրերում ապրիլի 30-ին սպասվում են տեղումներ՝ անձրեւ եւ կարկուտ:

ԼՈՒՐԵՐԻ ՀԱՄԱՐԻՑ

Գազի գինը՝ 165 դոլար

2009-ից Հայաստան ներկրվող գազի գինը կկազմի 165 դոլար: Ըստ «Ռեգնում» գործակալության, «Գազպրոմ» ընկերության տնօրենների խորհուրդը հաստատել է ԱՊՀ եւ մերձբալթյան երկրների համար գազի գնի բարձրացման նոր ռազմավարությունը: Այսպիսով, Հայաստան ներկրվող գազը 110-ի փոխարեն կկազմի 165 դոլար եւ այս գինը կպահպանվի մոտակա 3 տարիների ընթացքում: ԱՊՀ-ը մյուս երկրների եւ մերձբալթյան հանրապետությունների համար ռուսական գազի գները շարունակաբար կաճեն՝ հասնելով մինչեւ եվրոպական միջին գներին: Այսպես, Վրաստանին գազը կմատակարարվի 1000 խորանարդ մետրի համար 270 դոլար գնով: Հաղորդվում է, որ մայիսին նախատեսվում է «Գազպրոմ» ընկերության նախագահ Ալեքսեյ Միլլերի այցը Հայաստան, որի ժամանակ էլ կկնքվի գազի մատակարարման նոր պայմանագիր: Հիշեցնենք, որ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտարարել էր, որ «Գազպրոմի» հետ կկնքվի ռազմավարական նոր պայմանագիր եւ գազի գինը մոտակա 3 տարիների համար պետք է լինի կայուն ու լավագույնը ԱՊՀ երկրներում:

Ճանաչողական հանդիպում

Հանդիպումը Հայաստանի նոր արտգործնախարարի հետ ճանաչողական բնույթ կկրի: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը: «Ես համաձայնություն եմ տվել այդ հանդիպմանը: Կարծում եմ, որ դա կլինի ճանաչողական հանդիպում: Առաջին հերթին, ծանոթությունը ենթադրում է, որ տեսնենք, թե Հայաստանի նոր ղեկավարությունը ինչպես է արձագանքում դարաբաղյան հակամարտության կարգավորմանը», հայտարարել է Մամեդյարովը: «Մենք, իհարկե, հույս ունենք, որ հակամարտության կարգավորման առումով Հայաստանի դիրքորոշումը կլինի ավելի կառուցողական: Իսկ այն ընթրոնումը, որ հարցի լուծումը պետք է տեղի ունենա՝ ելնելով միջազգային իրավունքի սկզբունքներից, կամ», նկատել է նա, հաղորդում է «Նոյյան տապան»:

Քրքորյանը մեծացնում է իր բաժնեմասը

Ամերիկահայ մեծահարուստ Քրք Քրքորյանը ապրիլի 28-ին հայտարարել է, որ 170 միլիոն դոլար է առաջարկում «Ֆորդ» ընկերությանը 20 միլիոն բաժնետոմսեր ձեռք բերելու համար: Գործարքը կայանալու դեպքում, ինչպես հաղորդում է «Ազատությունը»՝ վկայակոչելով CNNMoney.com ինտերնետային պարբերականը, այս անիս ավելի վաղ «Ֆորդ»-ի 100 միլիոն բաժնետոմս ձեռք բերած միլիարդատիրոջ բաժնեմասը կանցնի 5 տոկոսից: Քրքորյանի ներդրումային ընկերությունը՝ «Թրասիմնդա»-ն, հայտարարել է, որ առաջարկում է 8,5 դոլար մեկ բաժնետոմսի դիմաց: Ըստ գործող կարգի, ներդնողը պիտի հրապարակայնորեն հայտարարի բաժնետոմսերը գնելու մասին, եթե գործարքից հետո նրա բաժնեմասը անցնում է 5 տոկոսից:

«Հայկական ստերի դեմ պայքարի» կարգախոսով հանրահավաք Նյու Յորքում

Ապրիլի 27-ին Նյու Յորքի «Թայմս» հրապարակում Ամերիկայի քուրդական միությունների Ֆեդերացիայի հովանու ներքո գործող «Երիտասարդ քուրդերի» միությունը կազմակերպել էր հանրահավաք «Հայկական ստերի դեմ պայքարի եւ զոհված դիվանագետների հիշատակը հարգելու» կարգախոսով, որի նպատակն էր հակազդել ապրիլի 24-ի միջոցառումներին: Ելույթներում «պատմությունը պատմաբանների հայեցողությանը թողնելու» կոչեր են արվել: Դրան հաջորդ օրվա հանրահավաքով, որը նույն հրապարակում է կազմակերպվել, պատասխանել են ամերիկահայերը: CNN-Turk-ը նշում է, որ հայերի հանրահավաքում ելույթ են ունեցել նաեւ ԱՄՆ Կոնգրեսի մի շարք անդամներ, որոնք էլ ընդգծել են հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը ԱՄՆ-ում եւ Թուրքիայում:

Հ. Ղ.

Հայաստանում կան լեռնականներ եւ կրիմինալ

Մայիսի 2-ին կառավարության նիստերի դահլիճում կկայանա Լեռնային Տեր-Պետրոսյանին սպասող ուժերի հերթական կոնգրեսը: Ինչպես «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեց Լ.Տեր-Պետրոսյանի մամլո խոսնակ Արման Մուսինյանը, բացի քաղաքական ուժերի ներկայացուցիչներից, կոնգրեսին կմասնակցեն հայտնի մտավորականներ ու հասարակական գործիչներ: «Իսկ այլ կուսակցություններից ներկայացուցիչներ կհրավիրվեն» հարցին ի պատասխան Ա. Մուսինյանը հայտարարեց. «Հայաստանում այլ քաղաքական ուժեր չկան. կան միայն կրիմինալ ուժեր»: Անազատության մեջ գտնվող տասնյակ ակտիվիստների բացակայությունը կոնգրեսի աշխատանքներին որեւէ խնդիր կամ խոչընդոտ, ըստ խոսնակի, չի առաջացնի: Ինչ վերաբերում է կոնգրեսի օրակարգին, ապա քննարկվելիք հարցերը դեռեւս որոշված չեն:

Նորադուզցի «սպեցնազը» Նախիջեւանո՞ւմ

ՀՀ շորս քաղաքացիներ հայտնվել են Ադրբեջանի տարածքում

Ադրբեջանական կայքէջերն, առանց հոգնության եւ միօրինակությունից ծնվող ծանծաղության դառնալու վախի, ամեն օր, երբեմն օրվա ընթացքում մի քանի անգամ ապատեղեկատվություն են տարածում, թե իբր հայկական զինուժը այս կամ այն տեղում այս կամ այն տեւողությամբ խախտել է զինադադարը: Այսօրինակ հաղորդագրությունները, որ երբեմն չեն հաստատվում, դարձել են սովորական:

Սակայն, ամենայն հավանականությամբ, ադրբեջանական քարոզչամեքենան եւս «հոգնել» է կիրառվող միջոցների միօրինակությունից: Երեկ «Ազերիպրես» գործակալության տարածած տեղեկության համաձայն, հայկական զինուժը, բան ու գործ թողած, անցել է Ադրբեջանի հանդեպ սադրանքներ սարքելուն, այն էլ հենց Ադրբեջանում: Ըստ հաղորդագրության, ադրբեջանական իրավապահ ժամինքներում գործակալության աղբյուրների փոխանցմամբ, «Կնասագերծվել է Հայաստանի զինված ուժերի հատուկ նշանակության զորախմբի ծառայողների՝ Ադրբեջանի տարածքում սադրանք իրականացնելու փորձը»: Ավելին, այդ առնչությամբ ձերբակալվել է «խմբավորման յուրաքանչյուր անդամ, փաստի առիթով տարվում է քննություն»:

«Ազգի» զանգին ի պատասխան Հայաստանի պաշտպանության նախարարությունից տեղեկացրին, որ ադրբեջանական լրատվամիջոցների տարածած լուրը՝ իբր ադրբեջանական զինուժի կողմից հայկական դիվերսիոն խումբ է վնասազերծվել, չի համապատասխանում իրականությանը: Ըստ ՊՆ հաղորդագրության, իրականում ադրբեջանական կողմում են հայտնվել ՀՀ քաղաքացիներ Վանիկ Ամբոյանը (Գավառ), Արտյոմ Զոհրաբյանը (Նորադուզ), Կարեն Թորոսյանը (Նորադուզ) եւ Աղասի Եսոյանը (Նորադուզ), որոնք գնացել են խաչիկ գյուղում տեղակայված զինվան՝ իրենց զինծառայող ընկերոջ հետ տեսակցության: Այնուհետեւ, վերադառնալիս կորցրել են ճանապարհը եւ հավանաբար անցել Նախիջեւանի կողմ:

Ըստ ՊՆ տվյալների, նշված քաղաքացիները ադրբեջանական անվտանգության ժամինքների մոտ են, նրանց առողջական վիճակը նորմալ է: Հայկական կողմը դիմել է Կարմիր խաչի միջազգային գրասենյակ՝ Բաքվի հանդեսասխան գրասենյակի հետ նրանց վերադարձը կազմակերպելու նպատակով:

Ա. Հ.

Նախնական կալանքի տակ է 66 մարդ

Գլխավոր դատախազությունից հաղորդում են, որ սահմանադրական կարգի խախտմամբ պետական իշխանությունը յուրացնելու նպատակով երեւան հարուցում զանգվածային անկարգություններ հրահրելու եւ կազմակերպելու, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքի առթիվ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործի շրջանակներում, ապրիլի 28-ի դրությամբ, նախնական կալանքի տակ է գտնվում 66 անձ, եւս 27 մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու պարտավորություն: Ապրիլի 28-ի դրությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը դատարան է ուղարկել 31 քրեական գործ 31 անձի վերաբերյալ:

ԱԺ նախագահի եւ «Ժառանգության» ղեկավարի՝ ԼՂՀ վերաբերյալ նախագծերը ԱԺ-ում տարբեր ճակատագրեր ունեն

ՄԵՐԻԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԶԼՄ-ներում մի շարք մեկնաբանություններ պատճառ էին դարձել, որ երեկ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը հանդիպի լրագրողներին: Խոսքը Եխեխվ-ի՝ «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին» բանաձեւի եւ «Հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ զանգվածային միջոցառումների անցկացման մասին» օրենքի նախագծի փոփոխությունների վերաբերյալ ԱԺ նախագահի մեկնաբանություններին էր վերաբերում:

Բանաձեւի մասով. ըստ ԱԺ նախագահի, առաջարկներ կան, որ կարեւոր են, բայց դրանց զգալի մասը կարդ չունեն մարտի 1-ի իրադարձությունների հետ: Կան դրույթներ, որոնք լիարժեք չեն համապատասխանում կատարված իրադարձությունների պատկերին՝ ակնհայտորեն սա Եխեխվ լավագույն բանաձեւը չէ, քանի որ Եխեխվ-ն կարճ ժամանակ է ունեցել բանաձեւը կազմելու: Կան կարեւոր առաջարկներ, որոնց մասին պետք է խոսել, ուսումնասիրել բանաձեւի առաջարկները՝ մանավանդ ո՞վ չգիտե, որ մենք խնդիրներ ունենք ժողովրդավարության զարգացման, քաղաքացիական հասարակության կայացման, իշխանություն-ընդդիմություն հարաբերությունների կարգավորման ասպարեզում: Այնպես որ, ըստ ԱԺ նախագահի, մենք պետք է հաշվի առնենք ամեն փաստաթուղթ, որն ուղղված է մեր երկրում ժողովրդավարության զարգացմանը:

Ընդդիմության հետ երկխոսության առաջարկի հիմքը ո՞րը պետք է լինի, ինչի՞ վրա պետք է կառուցվի երկխոսությունը, հարցրեց Տ. Թորոսյանը՝ նկատելով, թե պիտի ճշգրիտ երկխոսության ձեւաչափը եւ «ինչի՞ շուրջը»: Արտախորհրդարանական ընտրությունների մասին առաջարկներին էլ ի պատասխան ասաց, թե խորհրդարանական ընտրությունները 10 ամիս առաջ են եղել, ով ցանկություն ունեցել է՝ մասնակցել է, ում ընտրել են՝ նա խորհրդարանում է. ամեն տարի էլ մի ուժի մասին կարող են ասել, թե խորհրդարանում չէ. ուրեմն տարին մեկ ընտրություն պետք է անե՞ն, հարցրեց նա: Մարտի 1-ի իրադարձությունները քննող հանձնաժողովն չի բացառվում, որ սեղեկի հենց Ազգային ժողովում, եթե խորհրդարանական խմբակցությունները քննարկեն եւ նպատակահարմար համարեն:

Տես էջ 3

Զինվորական օրենսդրությունը եւ միգրացիոն հոսքերը

Հանձնայն ԵԱՀԿ-ի վերջերս իրականացրած հետազոտության, Հայաստանի արտագնա աշխատողների տարեկան քանակը կազմում է 17000 (ինչն աշխատուժի ընդհանուր թվում կազմում է տղամարդկանց 14 եւ կանանց 3 տոկոսը): Աշխատանքային միգրանտների մոտ 93 տոկոսը մեկնում է Ռուսաստան: Հայաստանից մեկնած արտագնա աշխատողների 90 տոկոսը ընտրում է աշխատել Ռուսաստանում՝ չունենալով դրա իրավունքը: Հաճախ այս անօրինական աշխատողները շահագործվում են՝ աշխատելով եւ բնակվելով ծանր պայմաններում, զոհ են դառնում մարտնենգությամբ եւ թրաֆիքինգով զբաղվող կազմակերպված խմբավորումներին:

Վերջին ինը ամիսների ընթացքում «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի գործընկեր «Զինվորի մայր» հանրապետական բարեգործական ՀԿ-ն ավելի քան 500 անձանց խորհրդատվություն է տրամադրել արտագնա աշխատողների զինվորական ծառայության հարցի վերաբերյալ: Կանանց հասարակական խորհուրդ ՀԿ-ն, որը Մարտունիում հյուրընկալում է ԵՀՀ «Միգրացիայի եւ վերադարձի ռեսուրս-կենտրոններ»-ին, օժանդակել է Առամ Գրիգորյանին նոր անձնագիր ստանալու եւ զինվորական ծառայությունից խուսափելու պատճառով երեխան հետաքննությունից զերծ մնալու հարցում, ինչը նա չէր կարող անել անձամբ, քանի որ աշխատում էր արտասահմանում: 2007-ի դեկտեմբերի 11-ին երեխան գործը կասեցվել է:

«5 տարուց ավելի զբաղվում եմ այս ոլորտով, թե ինչպես լարը ենք տրամադրել տղաներն գալ Հայաստան, երբ արտագաղթել են 91-92-ին Ռուսաստանի տարբեր գյուղեր ու խաղաքաղաքներ, որտեղ անձնագրեր չեն տալիս: Կա օրենք, որտեղ ասվում է, թե ինչպես 27 տարեկան երիտասարդը կարող է գալ Հայաստան եւ գումար մուծել յուրաքանչյուր բաց թողած զորակոչի համար», երեկ «Ուրբաթ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց «Զինվորի մայր»-ՀԿ-ի նախագահ Գրետա Միրզոյանը:

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ 27 տարին լրացած զինապարտ քաղաքացիները կարող են մուծել նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով: Իսկ բոլոր նրանք, ովքեր հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով ճանաչվել են ծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինվորական հաշվառումից, կարող են մուծել նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի չափով եւ այլն:

Օտարերկրյա պետություններում գտնվող պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին կարող է դիմում ներկայացնել օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական ծառայությանը կամ իրավասության հիմնակ: Զինվորական ծառայությունից խուսափելու պատճառով հետո՝ տասնօրյա ժամկետում սահմանված վճարները մուծում են բանկային հաշվարկի միջոցով: Այդ վճարներն էլ մուտագրվում են ՀՀ պաշտպանության պետական լիազոր մարմնի կողմից այդ նպատակով բացված հատուկ հաշվում:

Սակայն, ինչպես նշեց Գրետա Միրզոյանը, 2005-ից չեն եղել այնպիսի երիտասարդներ, որոնք լքել են հայրենիքը ծառայությունից խուսափելու համար. «Տղաներն ուզում են վերադառնալ՝ այստեղ գտնելու իրենց երկրորդ կեսին: Վերջին մեկ տարվա ընթացքում Ռուսաստանում հայտնվել են 24 երիտասարդներ, որոնք չունենալով փաստաթղթեր հայտնվել են լուրջ պրոբլեմների առաջ: 310 հոգի արդեն վերադարձել են, իսկ ովքեր ունեն Ռուսաստանի գրանցում, ծառայում են այնտեղ: 5 տարվա մեջ 3000 մարդ մեզ են դիմել տարբեր հարցերով: 2005-ից հետո թույլ չենք տալիս երկրից դուրս գալ նրանց, ովքեր զորակոչի ենթակա են»:

Հայաստանի «Միգրացիայի եւ վերադարձի ռեսուրս-կենտրոնների» եւ Ռուսաստանի նմանատիպ կենտրոնների միջեւ փոխանակման խթանումը հնարավորություն է տալիս ռեսուրս-կենտրոնների աշխատակազմերին ավելի տեղեկացված լինել աշխատանքային միգրացիային առնչվող ՌԴ օրենսդրության վերաբերյալ, խորհրդատվություն կազմել երկու կողմերի աշխատանքային միգրանտների առջեւ ծագող խնդիրների եւ մարտահրավերների մասին, ինչպես նաեւ հաստատել գործընկերական հարաբերություններ տեղեկությունների շարունակական փոխանակման եւ համագործակցության նպատակով:

ՆԱՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Դարաբաղ Տելեկոմն» ընդլայնում է բարեգործության սահմանները

ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանն ու «Դարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Երիկյանը համատեղ հուշագիր են ստորագրել Արցախի բջջային օպերատորի հերթական նվիրատվության մասին: Այս անգամ «Դարաբաղ Տելեկոմը» որոշել է կատարել 500 միլիոն դրամի նվիրատվություն, որը կուղղվի Արցախում առողջապահական ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես, Ստեփանակերտում կստեղծվի նոր բժշկահետազոտական լաբորատորիա, ձեռք կբերվի ռեանիմոբիլ, ինչի կարիքն Արցախում խիստ է զգացվում: «Դարաբաղ Տելեկոմի» տնօրինվ սկիզբ կդրվի նաեւ Մարտակերտի շրջանային նոր հիվանդանոցի կառուցմանը, որն, ի դեպ, ծրագրված էր իրականացնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով, սակայն գումարները չհերիքելու պատճառով շինարարությունը չէր սկսվել:

Ռալֆ Երիկյանը բավականին հանգամանալի ներկայացրեց իրենց բարեգործական նախաձեռնության առթիվ եւ կոչ արեց Դարաբաղում գտնվող սպասարկման գործունեություն ծավալող սուբյեկտների ղեկավարներին, որպեսզի նրանք էլ սեփական եկամուտներից մասհանումներ անեն պետականանպաստ ծրագրերին:

Հուշագիր ստորագրումից հետո վարչապետը պատասխանելով արարողությանը լրագրողների հարցերին: Մասնավորապես, հարց հնչեց, թե ինչո՞ւ Մարտակերտի շրջանային բուժհիմնարկի կառուցման ֆինանսավորումը չի իրականացվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից, ո՞ւր են կորել այդ նպատակով հանգանակված գումարները: Արա Հարությունյանը խորհուրդ տվեց լրագրողներին՝ նման հարցադրումով դիմել հիմնադրամի պատասխանատուներին: Նրա կարծիքով, սակայն, գումարները չհերիքելու պատճառը գայում փոխհատուցվեն հեռախոսավարձի սակագների բարձրացմամբ: Արա Հարությունյանն ասաց, որ կատված թվայնացման հետ, սակագները կփոխվեն: Դեռեւս ուսումնասիրություններ են կատարվում, սակայն ամենայն հավանականությամբ՝ ամսվա կտրվածքով մինչեւ 500 րոպե խոսելը կլինի անվճար: Նրա հավատամքով՝ դա միջին վճարակարգական ցուցանիշ է:

Լրագրողներին հետաքրքրում էր, թե ինչպիսին կլինի մայրաքաղաքում ջրամատակարարման վիճակը հատկապես ամռան ամիսներին: Արա Հարությունյանը տեղեկացրեց, որ լուրջ ծրագրեր իրականացվում են: Ամառվա ընթացքում սեփականատերերն ամեն օր ջուր կունենան, իսկ տուրքերյա ջրամատակարարման հարցը կլուծվի արդեն առաջիկա տարիներին:

Հարցերից մեկն էլ վերաբերում էր պետության կողմից ոչ պետական լրատվամիջոցներին աջակցելուն: Այս տարվա պետբյուջեով նախատեսված են նման գումարներ, սակայն առ այսօր ոչ մի լրատվամիջոց սուբսիդիա չի ստացել: Նախորդ տարիներին մի շարք ԶԼՄ-ներ տարբեր ծավալի ֆինանսական օժանդակություններ պետությունից ստանում էին: Վարչապետը նշեց, որ հասարակական կազմակերպություններին եւ զանգվածային լրատվամիջոցներին ֆինանսական աջակցման նպատակով ստեղծված է հանձնաժողով, բայց թե այդ ուղղությամբ ինչ քայլեր է ձեռնարկել հանձնաժողովը՝ ինքը տեղյակ չէ:

Լրագրողները դժգոհեցին նաեւ, որ որոշ նախարարներ խուսափում են մամուլի ասուլիսներից: Իր անձնական օրինակը բերելով, Արա Հարությունյանն ասաց, որ կառավարության թափանցիկ աշխատանքը միտս առպահովված է, ինչ մնում է լրագրողներից խուսափող նախարարներին, նա խոստացավ այդ հարցը քննարկել:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Կարգալույծ է հռչակվել Ղուկաս աբեղա Զահարյանը

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Ղուկաս աբեղա Զահարյանը: Հայրապետական վճռի կայացման համար հիմք է ծառայել Ղուկաս աբեղայի դիմումը: Կարգալույծ հռչակված եկեղեցականն այսուհետեւ կդասվի աշխարհականների շարքը՝ Վահան Զահարյան ավազանի անունով:

«Տղային բանակ ճանապարհելը մեծ ուրախություն կլինի»

Հավատացած է Կենտրոնի քաղաքեր Գագիկ Բեգլարյանը

Անցած հանգստյան օրերը Կենտրոն համայնքի բնակչության զգալի մասի համար ուրախ եւ հուզիչ օրեր էին: Կենտրոն համայնքի քաղաքեր Գագիկ Բեգլարյանը կազմակերպել էր հերթական ավանդական հանդիպումը համայնքի ծնողների եւ զինված ուժերում ծառայող նրանց որդիների հետ: Վայրում, Գորիսում եւ հանրապետության մի շարք զորամասերում արդեն 5-րդ տարին կազմակերպվող նախաձեռնության շրջանակներում այս անգամ էլ համայնքի ավելի քան 5 հարյուր ծնողներ հնարավորություն ստացան այցելելու իրենց որդիների զորամասեր: Հանդիպումների ժամանակ քաղաքեր զորամասերին նվիրեց հեռատաղանդներ, երաժշտական կենտրոններ եւ սպորտային գույք: Զորամասեր կազմակերպված այցերին, որում իր ներդրումն ուներ նաեւ ԱԺ պատգամավոր, ՀՅԿ-ական Ռուբեն Սադոյանը, մասնակցում էին նաեւ համայնքի քաղաքեր Գագիկ Բեգլարյանին կից մտավորականների խորհրդի անդամները՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ Ասատուր Գետրգյանի գլխավորությամբ:

«Որպես ծառայում է Վայքի զորամասում, արդեն մոտ 1 տարի 5 ամիս ծառայության մեջ է: Թաղամասի կազմակերպած ակցիայի շնորհիվ երկրորդ անգամն եմ տղային այցի գալիս: Տղան գոհ է զորամասից, ծառայությունից: Զորամասեր գալիս հաճոյանում եմ, որ իրոք տղան ինչի ծառայի հայոց բանակում, հանգիստ նում եմ իրենց հսկողության ներքո», ասաց Վայքի զորամասում ծառայող որդուն այցի եկած Ուզաննա Ալոյանը: Ծնող Նաթալիա Մանուկյանի հանգամանքն ավելի ուրախալի էր: Նա հնարավորություն էր ստացել միանգամից իր երկու զավակներին այցելելու, որոնցից մեկը՝ Վայքի, մյուսը՝ Սիսիանի զորամասում է ծառայում: Զորամասերում ամեն դրվագը հուզիչ էր՝ գրկախառնված ծնողներ եւ որդիներ, սիրելի եւ հարազատ մարդկանց տեսնելու հրաշալի առիթ ու ջերմ հանդիպումներից առաջացած արցունքներ:

«Կենտրոն համայնքի միջոցառումներից մեզ համար ամենասիրելի եւ ամենաընդունելի միջոցառումներից մեկն է սա, որովհետեւ մենք որդեգրել ենք մի սկզբունք, որ համայնքը մի մեծ ընտանիք է իր ամբողջ խնդիրներով, իսկ հայ ընտանիքում, բոլորս գիտենք, ամենակարեւորը հայ զինվորն է: Այս միջոցառման միջոցով մենք փորձում ենք համայնքի կամը հասցեագրել ծնողի եւ զինվորի միջեւ: Շատ դրական կողմեր կան, մեր բանակում ամեն ինչ հետզհետե նորմալանում է, եւ ինձ թվում է, որ մենք կհասնենք մի բանի, որ յուրաքանչյուր հայ ընտանիքում շատ մեծ ուրախություն կլինի տղային բանակ ճանապարհելն ու հետ ընդունելը: Այսօր արդեն յուրաքանչյուրն այդ զինվորներից հասկանում է, որ դա սովորական պարտականություն չէ, այլ իր ներդրումն է մեր պետության, ազգի ու ժողովրդի համար: Կենտրոն քաղաքեսարանը՝ հանձին ինձ, միշտ պատրաստ է իրենց կողքին լինել եւ սատարել», ասաց Կենտրոն համայնքի քաղաքեր Գագիկ Բեգլարյանը:

«Ուզում եմ հարյուր կարգախոս կախեմ ամբողջ հանրապետության տարածքում, ուզում եմ ասդիտյով եւ հեռատաղանդությամբ ասեմ՝ պահպանենք հայրենիքի սահմանները, զորակոչը կազմակերպենք անհրաժեշտ ձեւով, չի աշխատելու այնպես, ինչպես աշխատում է այս ակցիան: Գագիկ Բեգլարյանի արդեն 5-րդ տարին կազմակերպած այս ակցիան ավելի խոսուն է, ավելի ճշմարիտ, քան որեւէ քարոզչություն: Որովհետեւ ծնողը գալիս եւ իր աչքով տեսնում է, թե ինչ պայմաններում է սնվում, ինչպես է պատրաստվում, ինչպես է աշխատում եւ ամենակարեւորը՝ ինչ մարդկային հարաբերություններ կան», զինվորների հետ հանդիպմանը նշեց Ժողովրդական նկարիչ Ասատուր Գետրգյանը:

Այցերի ժամանակ քաղաքեսարանը կազմակերպել էր նաեւ հաճերգային ծրագիր զինվորների համար, առիթ ունեցան իրենց խոսքը զինվորներին ուղղելու նաեւ մեր մշակույթների հայ զինվորներին: «Այս ակցիաների կարեւորությունն առաջինը այն է, որ նախ մեր զինվորներն իմանան ում համար են պատրաստում հայրենիքը, այսինքն՝ իրենց թիկունքում տեսնեն ահռելի բանակ իրենց հարազատների, ժողովրդի, ում համար պատրաստում են սահմանը: Մենք համոզվում ենք մեր պատանիների խոսքին, որոնք ասում են՝ բանակը հզոր է», նշեց երգահան Արա Գետրգյանը:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
«Լայֆ, Գորիս

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեկ տարի

Գլխավոր եւ հիմնադիր
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՍՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՍՈՆՅԱՆ / հեռ 529221

Գրասենյակապետություն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Գանձապետ, ծառայություն / հեռ 582483

Շուրջօրյա լրահամար ծառայություն
/ հեռ 529353

Գանձապետական բաժանմունք
«Ազգ» թերթ

Թերթի նիստերի ամբողջական թե մասնակի արտադրումները տրպագիր ճանապարհով կամ ռադիոհեռարձակությամբ առանց խմբագրության գրավոր հանձնարարության խստիվ արգելվում են հանձնայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի

Նիստերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում

Գ տառով յոթանասնոց գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Քնապահպանական հիմնախնդիրները Շիրակի մարզում

Գյումրու բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնը հատկապես վերջին շրջանում գործուն աշխատանք է կատարում տեղի բնապահպանական հիմնախնդիրներին հասարակության իրազեկման, այդ խնդիրները հանրության եւ իշխանությունների ուշադրության ոլորտում պահելու ուղղությամբ: Կենտրոնում կազմակերպված հերթական ճնշարկումը հանձնաժողովի անդամագրած էր Գյումրիում ու Շիրակի մարզում շրջակա միջավայրի տարրերի վիճակին եւ դրանց որակի բարելավման առաջնահերթ միջոցառումներին: Այս մասին ընդարձակ հաղորդումով հանդես եկավ մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Համլետ Գասպարյանը:

ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների եւ ՀՀ կառավարության 2007-2011 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին համապատասխան Շիրակի մարզում եւս առաջիկա տարիների համար նախատեսվել են որոշ բնապահպանական միջոցառումներ: Հնարավոր է, որ կառավարության ծրագրում այս հարցերում եւս փոփոխություններ լինեն, սակայն, ինչպես նշեց Հ. Գասպարյանը, բոլոր դեպքերում մեր բնապահպանական խնդիրները մնում են մեր: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է մթնոլորտային օդի, ջրերի, հողերի պահպանության վիճակին ու դրան առնչվող հարցերին:

Հանդիպման ժամանակ ճիշտ նկատվեց, որ Շիրակում օդային ավազանի վիճակը պայմանավորված է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակով: Մարզի արդյունաբերության չաշխատելու, վնասակար արտանետումներով ձեռնարկությունների բացակայության հանգամանքը դրական նորեն է անդրադառնում այդ վիճակի վրա: Մյուս կողմից, հիմնական աղտոտող նյութերը մթնոլորտ են արտանետվում ճնշում շրջանում, բնակչության կողմից ջեռուցման նպատակով զանազան լիմիական բաղադրությամբ նյութերի այրման հետեւանքով: Այդ ամիսներին օդում ավելանում է ածխածնի օքսիդի, ծծմբի եւ ազոտի երկօքսիդների պարունակությունը, հաճախ 2-3 անգամ գերազանցելով սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ): Մնացած ամիսներին օդի աղտոտվածությունը պայմանավորված է մեխանիկական փոշու առկայությամբ՝ կարված մարզի որոշ տարածքներում հիմնականում շինանյութերի հանհարդյունահանման, հողաթների երթեւեկելի փողոցների զգալի մասի անբարեկարգ վիճակի հետ, եւ ավտոտրանսպորտային արտանետումներով, որոնք եւս գրեթե կրկնակի գերազանցում են ՍԹԽ-ն: Վիճակը մեղմելու նպատակով նախատեսվում է 2008-11 թթ. ընթացքում մարզի երեք խաղաթների փողոցների բարեկարգման, ասֆալտապատման եւ կանաչ տարածքների ընդլայնման որոշակի ծավալի աշխատանք կատարել: Այսօր Գյումրիում բնակչության մեկ շնչին ընկնող կանաչ տարածքը հազիվ 4 քառ. մետրի է հասնում, որը պահանջվածից ավելի քան քառակի պակաս է: Մարզում օդի որակի բարելավման առաջնահերթ միջոցառումներից են նաեւ ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկողության ուժեղացումը, մաքրման սարքավորումների ներդրումը եւ էթիլացված բենզինի օգտագործման արգելումը, օդի որակի շարունակական մոնիտորինգի իրականացումը, «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Գյումրու լաբորատորիայի սարքավորումների բազայի ընդլայնումը, 2-3 նոր դիտակետերի ստեղծումը:

Շիրակի մարզը բավական հարուստ է ջրային պաշարներով, սակայն դրանց օգտագործման վիճակը շատ վատ է: Ջրամատակարարման եւ ոռոգման համակարգերի անբարեկարգ վիճակի պատճառով անչափ շատ են ջրի, մասնավորապես խմելու ջրի անհարկի կորուստները: Եթե այս վերջին խնդրի լուծման ուղղությամբ ծավալուն աշխատանք է սկսվել եւ գերմանական բանկը այդ նպատակով զգալի ներդրումներ է անելու, ապա կոյուղաջրերի խնդիրը մնում է չլուծված:

Տես էջ 4

Տեր-Պետրոսյանի կողմնակիցները՝ Սահմանադրական եւ Եվրոպական դատարաններում

Մարտյան դեպքերից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանի շարժումը սատարող քաղաքական ուժերն ու կազմակերպությունները 26 անգամ իրազեկում են ներկայացրել քաղաքապետարանին՝ երթեր եւ հանրահավաքներ կազմակերպելու համար եւ մերժում են ստացել: Երեկ այս մասին հայտարարեց Տեր-Պետրոսյանի կենտրոնական շտաբի անդամ Մանուկակ Պետրոսյանն ու հայտնեց, որ իրենք դիմել են վարչական դատարան՝ վիճարկելու քաղաքապետարանի որոշումները: Վարչական դատարանը նրանց հայցը մերժել է, ուստի նրանք արդեն դիմել են Սահմանադրական դատարան:

Ինչպես արդեն տեղեկություն էր տարածվել, Հանրաժողովրդական շարժման կենտրոնը որոշել է դիմել Եվրոպական դատարան: Երեկ Մանուկակ Պետրոսյանն ու նրանց փաստաբան Վահե Գրիգորյանը նշեցին, որ հայցը դեռ պատրաստման փուլում է եւ առայժմ չի ներկայացվել դատարան. «Մեզ անհրաժեշտ է օտարերկրյա փորձագետների խորհրդատվություն: Այդ ուղղությամբ աշխատանքներ են կատարվում»:

Մանուկակ Պետրոսյանը հայտնեց, որ մայիսի 2-ին կառավարության նիստերի դահլիճում տեղի կունենա Հանրաժողովրդական շարժման երկրորդ կոնգրեսը, որի ժամանակ շարժման նախաձեռնողները, Մ. Պետրոսյանի խոսքով, կտան գնահատականներ այս ամբողջ ընթացքում կատարվածի վերաբերյալ:

Գ. Գ.

Հավակնոս, բայց իրատեսական

1-ին էջից

Մասնավորապես, աղքատության հիմնական կրճատումն ու անհավասարության նվազեցումը կառավարության գործունեության հիմնական ուղղություններից առաջինն է նշված: Այնուհետեւ նշվում են կառավարման համակարգի բարեփոխումները եւ կոռուպցիայի դեմ պայքարը, տնտեսական զարգացումը, սոցիալական ոլորտում ծառայությունների որակի բարձրացումն ու մատչելիությունը:

Կառավարությունում տեղի ունեցած ենթակոծ ժամանակ դիտողություններ եւ առաջարկներ ստացվեցին կառավարության անդամներից, իսկ մինչեւ նիստը առաջարկներ էին արվել նաեւ իշխանական կուսակցության մեջ մտնող կուսակցություններից, ինչպես նաեւ ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունից: Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց հավանություն տալ կառավարության ծրագրին, նրա մեջ ներառելով նիստի ժամանակ արված դիտողությունները, եւ ներկայացնել Ազգային ժողովի քննարկմանը:

Նիստի ավարտից հետո տեղի ունեցած ճամբուղի ասուլիսի ժամանակ խոսքը էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը եւ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը:

Ներսես Երիցյանը, անդրադառնալով կառավարության տնտեսական հաղթանակությանը եւ կոնկրետ այն թիրախներին, որոնք կարտադրվել են, նշեց, որ հավակնոս ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ գլխավոր պայմանը Հայաստանի տնտեսական մրցունակության բարձրացումն է բոլոր բնագավառներում՝ հարկային եւ մաքսային, տեսական կառավարման մեջ, ինչպես նաեւ հարկ է մոբիլիզացնել ներքին ռեսուրսները, ներգրավելով նաեւ արտերկրի ներդրումները: Նախարարը ընդգծեց ծրագրի այն կետը, որը նախատեսում է պահանջկոտ սպառողի ձեւավորում, ինչը կարեւոր խթան է երկրի տնտեսական զարգացման համար:

Տիգրան Դավթյանը կառավարության ծրագրերը հավակնոս համարելով, միաժամանակ ընդգծեց, որ դրանք նաեւ իրատեսական են եւ որ դրանց իրականացմամբ մեծ կունենանք նոր որակ տնտեսության մեջ եւ զարգացման նոր իրավիճակ: Շատ ծրագրերում, որոնք իրականացնում է տեսությունը, ակնկալվում է, որ հասարակությունն ու մասնավորը եւս կմասնակցեն դրանց: Միաժամանակ, այն ծրագրերում, որտեղ մասնավոր հատվածը կունենա հետաքրքրություններ, տեսությունը պատրաստ կլինի իր մասնակցությունն ունենալ:

Տիգրան Դավթյանը երեկ հայտնեց նաեւ, որ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, որն իրականացվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ, արդեն այս տարի իրականություն կդառնա: Մասնավորապես, կառավարության աշխատակազմում, ֆինանսների նախարարությունում ու էկոնոմիկայի նախարարությունում կներդրվի միասնական փաստաթղթաշրջանառության համակարգ: Մինչեւ տարեվերջ նման համակարգ կստեղծվի համայնքների համար:

«Ազգի» հարցին, թե ներկայումս աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ շրջանառվող տեսական ծառայողների կենսաթոշակային ապահովության օրենքի նախագիծն ըստ էության հակասում է կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ուղղությանը եւ հնարավո՞ր է, որ այն ընդունվի կառավարության կողմից, Ներսես Երիցյանը պատասխանեց, որ յուրաքանչյուր նախաձեռնություն նախ քննարկվում է, հիմա նաեւ հասարակության կողմից, տեղի են ունենում բանավեճեր, հետո դրվում կառավարության քննարկմանը: Շրջանառվող օրենքի նախագիծը կառավարության կողմից ընդունված է համարվում, եթե կա կառավարության որոշում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Ամ նախագահի եւ «Ժառանգության»...

1-ին էջից

Եթե նույնիսկ այդպիսի բան լինի՝ այս խնդիրը չափազանց մեծ պատասխանատվություն է պահանջում, այդ հանձնաժողովում աշխատող խորհրդարանականները չափազանց պատասխանատվությամբ պետք է վերաբերվեն խնդրին:

Երթերի, ցույցերի օրենքի փոփոխությունների մասով. ժամանակին, երբ օրենքը հաստատող փոխեցին՝ Ամ նախագահը վստահ էր, որ այդ փոփոխություններն էլի հետ են փոխելու, սակայն այն ժամանակ իրավիճակն այլ էր: Հետմարտիմեկյան նոր փոփոխությունների վերաբերյալ ինքնակոչները եվրոպացի փորձագետների հետ Ամ նախագահի ձեւաչափով՝ էլի տիպ ժամանակի պատճառով էին, այժմ օրենքի փոփոխությունների նախագիծը բաց է, առաջարկ անել ցանկացողները կարող են այժմ էլ անել այդ առաջարկները, իսկ Վենետիկի հանձնաժողովը, ում փորձագիտության են ուղարկվել օրենքի փոփոխությունները, մինչեւ մայիսի 15-ը Ազգային ժողովին կուղարկի իր եզրակացությունը նոր փոփոխությունների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պատասխան Արմեն Հարությունյանի արտահերթ զեկույցին Ամ նախագահը դեռ չէր ծանոթացել, սակայն վերջինս իր զեկույցում, ըստ Ամ նախագահի, երեւում է, ասել է այն բոլորն, ինչ կարելի էր ասել այդ թեմայով. սա ակնկարկ էր ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանի այն ակնարկին, թե մարտիմեկյան իրադարձությունները ինքնակոչ անկախ հանձնաժողով կարող է նաեւ ստեղծվել մարդու իրավունքների պատասխանի ինստիտուտի ձեւաչափում:

Երեկ, ի դեմ, Ազգային ժողովը էվեակությամբ մերժեց Հայաստանի կողմից ԼՂՀ ճանաչման վերաբերյալ Ռաֆֆի Հովհաննիսյանի եւ «Ժառանգություն» խմբակցության՝ արդեն մի քանի ամիս շրջանառության մեջ գտնվող օրենքի նախագիծը: Նախագիծն այս քառօրյայի օրակարգում ընդգրկելու ելույթների ընթացքում Ամ նախագահն ու «Ժառանգության» պատգամավորները հայտնեցին նեղանալ իրարից: Ասվեց, որ Ամ արտաքին հարաբերությունների հանձնաժողովն այդ նախագծի բովանդակությանը դեմ չէ, սակայն դեմ է ներկայացնելու պահին եւ ձեւին, բացի այդ՝ նախագիծը ԼՂՀ-Հայաստանի արտաքին գերատեսչությունում ՀՀ Ամ եռակի ճնշարկում չի անցել նախապես: Իսկ, օրինակ, ՀՀԿ-ական Համլետ Հարությունյանն այդ օրինագծի գոյությունը համազգային խնդիրների սեփականատնտեսման փորձ համարեց մի ուժի կողմից: Մինչդեռ «Ժառանգության» ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը համարում էր, որ այս օրինագծի ճնշարկումը առիթ կդառնար բոլոր տեսակետները լսել խնդրի վերաբերյալ: Ի դեմ, երեկ Ազգային ժողովի դահլիճում շարունակեց ճնշարկվել ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ Ամ հայտարարության նախագիծը՝ սկսված նախորդ քառօրյայում հենց Ամ նախագահի առաջարկով, որի մասին մեզի Տ. Թորոսյանից հետաքրքրվեցինք, թե արդյոք նույն եռակի ճնշարկումն այս նախագիծն անցնի է: Ըստ Ամ նախագահի՝ այստեղ խոսքը միայն Արդեշերի ազատիպ պահվածքին՝ մեր համարժեք վերաբերմունքի ձեւավորման մասին է միայն, ավելի լայն ճնշարկումներ ակնկալել պետք չէ, բացի այդ՝ Ամ կանոնակարգով հենց նախագահի առաջարկով հայտարարությունն այս ձեւաչափով էլ հենց պետք է ճնշարկվի:

Երբ Ռաֆֆի Հովհաննիսյանից հետաքրքրվեցինք, թե արդյոք այս հայտարարության ճնշարկումն արդեն չէ՞ ԼՂՀ հարցի մասին ամբողջական տեսակետներ հայտնելու, ինչպես որ իր օրինագծի դեպքում էր ակնկալում, վերջինս նկատեց. «Այդ հայտարարությունն անաչառ, անսկզբունք նմանակում է եւ փաստորեն փորձում է թույլ հիմունքներով փոխարինել ԼՂՀ-ն ճանաչելու օրենսդրական նախաձեռնությունը», ասաց նա՝ հիմնավորելով, թե այս հայտարարությունը հիմնված է ԵԽԽՎ 1614 բանաձեւի վրա, մինչդեռ ով ամբողջությամբ կարդա այդ բանաձեւը, կտեսնի, որ այնտեղ կա դիվանագիտական մտահոգություն, եթե չասենք՝ պարտություն:

Հ. Գ. Ի դեմ, երեկ Ամ նախագահին հարց ուղղվեց, թե կուլիշիոն նոր գործընկերոջը՝ ԵԵԿ-ին պորտֆելներ բաշխելիս տուժել է հենց ՀՀԿ-ն. «ՀՀ նախագահական ընտրությունների արդյունքում Հանրապետական կուսակցությունը ոչինչ չի կորցրել. ճիշտ հակառակը, ստացել է ավելի մեծ պատասխանատվություն՝ ունենալով իր կուսակցության նախագահը որպես հանրապետության նախագահ, այդպիսով մեծացել են եւ մեր պատասխանատվությունը, եւ առաջադրած հարցերի իրականացման հնարավորությունը», պատասխանեց Ամ նախագահը:

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

- Ժամը 9.30-ին «Կոնգրես» իրտանոցում կսկսվի «Հայաստանի հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն միգրացիայի խնդիրներ» թեմայով երկօրյա համաժողով:
- Ժամը 10.00-ին «Մետրոպոլ» իրտանոցում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) եւ աղքատության նախարարությունը հրավիրում են ՁԼՄ-ների ներկայացուցիչներին մասնակցելու «ՀՀ պարտավորությունները երեխաների պաշտպանության եւ օտարերկրյա ուղեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիայի եւ ազգային օրենսդրության շրջանակներում» միջոցառմանը:
- Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբի իրտուն է Ամ ՀՅԴ խմբակցության անդամ Արա Նռանյանը: Նա կխոսի կառավարության գործունեության ծրագրում Դաշնակցության առաջարկների մասին:
- Ժամը 11.00-ին ՎՏԲ բանկի գրասենյակում (Նալբանդյան 46) կներկայացվի 2007 թվականի տարեկան եւ 2008-ի առաջին եռամսյակի հաշվետվությունը:
- Ժամը 12.00-ին «Հայացք» ակումբի իրտուն է Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Վլադիմիր Աղայանը:
- Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբի իրտուն են Լոնդոնի Քավենդիշ համալսարանի տնօրենը, համալսարանի Հայաստանի ներկայացուցիչը, հայ-բրիտանական ուսումնական EAD կենտրոնի տնօրենը: Թեման՝ հայ-բրիտանական կրթական հարաբերությունները:
- Նույն ժամին «Փաստարկ» ակումբի իրտուն են «ՀԿ-ների միացյալ հայեր» միության նախագահ Գագիկ Խալաթյանը: Թեման՝ հաշմանդամ երեխաների իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանում:
- Ժամը 13.00-ին Սինոփսիս Արմենիայի (Արշակունյաց պող. 41) շտաբահում տեղի կունենա հանդիսավոր հանդիպում՝ նվիրված Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկի) հիմնադրման 75-ամյակին:
- Ժամը 13.30-ին Արարատյան թեմի առաջնորդարանի դահլիճում տեղի կունենա www.qahana.am եւ www.araratyan-tem.am կայքերի շնորհանդեսը:

«Գրանդ Քենդի»-ն որպես սննդի հայրենական արտադրության ամենախոշոր հարկատու

Հարցազրույց ընկերության գործադիր տնօրեն Արմեն Բաբայանի հետ

- Պրն Բաբայան, վերջերս հրապարակվեց 2008-ի առաջին եռամսյակի 300 խոշոր հարկատուների ցուցակը, որտեղ «Գրանդ Քենդին» բարելավել էր իր դիրքերը եւ վճարած հարկերի չափով զբաղեցրել էր 19-րդ տեղը: Ինչո՞ւ էր սա պայմանավորված:

- Պատճառները բազմաթիվ են: Նախ ասեմ, որ մենք աշխատում ենք հայոց տոկոսով օրինական դաշտում եւ վճարում ենք բոլոր հարկերը: Մեր ընկերությունը ձգտում է աշխատում է իր արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ: Սա մեր որդեգրած քաղաքականությունն է եւ մենք հետեւողական ենք այս հարցում, իսկ հետեւողականությունը տալիս է իր պտուղները: Որակի էլ ավելի բարելավման պատճառով աճել են մեր արտադրության եւ իրացման ծավալները: Մենք ԱՊՀ տարածքում այն հազվագյուտ ընկերություններից ենք, որ աշխատում է հայոց տոկոսով բնական կակաո հատիկավորի հումքով: Հայաստան ներմուծվող եւ տեղում արտադրվող հաղցրավենիքի ճնշող մեծամասնությունը արտադրված է կակաո հատիկավորի արհեստական յուղով: Մենք բնական կակաո հատիկավորի յուղը այսօր արտադրում ենք սալիկների տեսքով որպես առանձին արտադրատեսակ: Այն շատ օգտակար է առողջության համար եւ որոշ հիվանդությունների դեմքում ունի կանխարգելիչ նշանակություն: Չնայած ԱՄՆ դոլարի կուրսի անկման պատճառով վերջին երեքնում մենք ունեցանք արտահանման ծավալների որոշակի անկում, սակայն տեղական շուկայում դիրքերի ամրապնդման հաշվին կարողացանք լրացնել այդ բացը: Որակի վերահսկողությունը ընկերության սեփականաշխատանքային ճշգրտման եւ խստագույն վերահսկողության տակ է:

Հարկային ցուցանիշների բարելավմանը նպաստել է, անշուշտ, նաեւ մեր նոր արտադրատեսակի մուտքը շուկա: Խոսքը «Գրանդ Քենդիի» սառցի տեսակների մասին է, որի մասին բազմիցս խոսվեց եւ գրվեց վերջերս: Մենք սառցը ներմուծում ենք ոչ միայն Վիետնամից, ինչպես Հայաստանում շատերը: Վիետնամական սառցը իր որակական հատկություններով առանձնապես աչքի չի ընկնում: Մենք ներմուծում ենք այն երկրներից, որոնցում աճում է ախտահի լավագույն սորտը՝ Բրազիլիա, Արգենտինա, աֆրիկյան մի քանի երկրներ: Ասեմ նաեւ, որ այս ոլորտում էլ ընկերությունը չհրաժարվեց իր որդեգրած, արտադրանքի որակը գերազանցապես դարձնելու քաղաքականությունից, որն էլ ունեցավ իր դրական արդյունքը: Նույնիսկ ամենախստապահանջ սառցի սիրահարները կարող են մեր արտադրած տարբ անվանում սառցի տեսակներից ընտրել իրենց ճաշակին ամենահամապատասխանը: Վերջապես մեր սպառողը հնարավորություն ստացավ վայելելու առանց թերակշռման եւ որեւէ խառնուրդի, մաքուր որակյալ սառց:

Ուզում եմ ընդգծել նաեւ մեր ընկերության որդեգրած կադրային քաղաքականության դերը ընկերության բազմաթիվ հաջողություններում: Մեր ընկերությունում իշխում է կորպորատիվ համերաշխության ոգին: Բոլորը՝ հավաքարարը, բանվորը, ինժեները, վարչական աշխատողները, դեկավարությունը, հոյաս են իրենց ընկերության համբավով: Հաստատված կորպորատիվ էթիկայի նորմերը եւ կանոնները պարտադիր են բացառապես բոլորի համար: Յուրաքանչյուրը, լավ աշխատելու դեպքում, ունի աշխատանքային առաջխաղացման լայն հնարավորություններ: Մեր կոլեկտիվը հավասարապես հոյաս եւ ուրախ է ինչպես մեր ընկերության, այնպես էլ երկրի նվաճումներով ու հաջողություններով:

Բերեմ իմ օրինակը, «Գրանդ Քենդիում» սկսել եմ որպես պահեստապետ, հետո՝ արտադրության պետի տեղակալ, «Պոնչիկանոցի» արտադրության պետ, ապա տնօրեն, հետո՝ «Գրանդ Քենդի» ընկերության գործադիր տնօրենի տեղակալ, իսկ հիմա՝ գործադիր տնօրեն: Իմ օրինակը, հավատացեք, միակը չէ ընկերությունում:

- Դուք թվարկեցիք ձեր հաջողությունների ներքին պատճառները, որոնք կախված են անմիջականորեն ընկերության ղեկավարությունից: Իսկ ի՞նչ կասեք արտաքին գործոնների, գործարար միջավայրի եւ պետության դերի մասին:

- Գործարարության զարգացման համար շատ կարեւոր են հավասար պայմանների առկայությունը, հարկային եւ մաքսային վարչարարության կատարելագործումն ու տարածաշրջանային զարգացումը: Մենք բարձր ենք գնահատում նախագահի եւ նոր կառավարության կատարած քայլերն այս ուղղությամբ: Այսօր ակնհայտ է, որ հարկային եւ մաքսային վարչարարությունը դառնում է ավելի արագաշարժ, արդյունավետ, թափանցիկ եւ մատչելի: Այս հանգամանքը մեր գործունեության վրա անդրադառնում է անմիջականորեն: Կուզեի ընդգծել նաեւ մի շատ ոգեւորիչ օրինաչափություն, որին վերջերս ականատես ենք: 1998-ից սկսված տնտեսական վերելքը եւ բարեփոխումների հետեւողական գործընթացը, որոնք կարող է չնկատել միայն սադիչը կամ մեր ոչ բարեկամները: Մենք ապրում ենք ազատ, ինքնուրույն պետության մեջ: Ունենք մեր դրոշը, զինանշանը, հիմնը, դրամանիշը, ունենք մեր բանակը, ունենք մեր դիպլոմատիան: Ունենք մեր ազգային գաղափարը, ունենք մեր ազգային գաղափարախոսությունը

«Թափանցիկ տեղական ինքնակառավարում»

2007 թվականն ամփոփելով՝ Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը հայտարարեց, որ ընդունած զբոսաշրջիկների թվով մարզը երկրորդն է երեւան քաղաքից հետո: Զբոսաշրջիկներն այսօր էլ են մարզ այցելում: Ամենից հաճախ, հատկապես ամռանը, լինում են Գառնիում եւ Գեղարդում: Սակայն մինչ հայկական ոճաժամանակաթային արժեքներով զմայլվելը, օտարերկրյա քաղաքացիները «բացահայտում են» հայոց բնաբխարհը, որը ոչ միշտ է ներկայանալի տեսքով ընդունում հյուրերին:

Գառնի մեկնելիս անկարելի է չնկատել ճանապարհի ողջ երկայնքով ձգվող, պոլիէթիլենային տոպրակներով ծածկված դաշտավայրերը եւ ճանապարհի տարբեր հատվածներում կուտակված աղբը: Ինչպես տեղեկացանք Բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչության Կոտայքի տարածքային բաժնում, տեսչությունը 3 անգամ 150.000 դրամով տուգանել է Գառնիի համայնքապետարանին: Մեր այցելության օրը աղբակույտերը այլի էին զարնում հենց գյուղի մուտքի մոտ:

Համայնքապետ Աշոտ Վարդանյանը նախ նշեց, որ մեզ սխալ են տեղեկացրել, եւ գյուղը մեկ անգամ է տուգանվի արժանացել, ինչն էլ մեկնաբանեց այսպես՝ «եկան, նայեցին: Մյուս համայնքների համեմատ մերը հարմար էր, ուղղակի Գալակտիկա գնացող ճանապարհին աղբ կար լցրած, ես հողով ծածկել էի: Շինարարական աղբ էր, ի միջի այլոց: Մեքենաներով բերել-լցրել էին...»:

Ջրհան ամիսներին 8 հազար բնակիչ ունեցող Գառնի գյուղում աղբահանություն չի կատարվում: Գարբանը ընդհանուր շաբաթօրյակ են կազմակերպում: Համայնքի ղեկավարի խոսքով՝ աղբարկղեր տեղադրված են 120 նշանակություն ունեցող «գարադոկում», որոնք դատարկվում են ամսական 1 անգամ: Պարբերաբար աղբակուտակումներ են լինում Արտաշատից եկող ճանապարհին, որի համար էլ տուգանվել են: «Հիմա տակտորով բդել-թաղել ենք, որը կարողացել՝ հավաքել ենք: Մի հատվածն է մնացել՝ Հացավանի եւ Գառնիի արանքում: Մի հատ փոս ենք արել, էդ փոսում լցնում ենք աղբը»,- նշեց համայնքապետը: Գառնիի աղբավայրը նախկինում տեղակայված է եղել Չափիչ գործարանի մոտակայքում, այժմ մի փոքր վերեւ է տեղափոխվել՝ «այստեղ հեռու»:

Համայնքապետարանի 55 միլիոնանոց բյուջեում աղբահանության համար առանձին գումար չի հատկացվել: Մեծ գործեր չեն անում. ափսառողին վարձակալությամբ են վերցնում՝ 30.000 դրամ ամսավճարով, ու մեքենայի վառելիքի գումարն են վճարում՝ մոտ 400.000 դրամ:

Զրույցի ընթացքում Ա. Վարդանյանը Գառնիի աղբահանության խնդիրը լուծված համարեց: Նոր թափոնատեղին անօգտագործելի հող է, ճանապարհից ու առատեղից հեռու: Թեեւ հողօգտագործման գծագրերն ուղարկվել են մարզպետարան եւ սպասում են նաեւ կառավարության հաստատմանը, սակայն համայնքապետը նշեց, որ թե՛ տեսչության, թե՛ բնապահպանության նախարարության ափսառակիցներն ասել էին, որ իրենք իրավունք ունեն ավագանու միջոցով որոշել, թե որ անկյունն է իրենց համար: Ավագանին էլ համարատարան ընտրություն է կատարել: Սակայն երբ համայնքի ղեկավարին հարցրեցինք փորձաքննությունների մասին, վերջինս զարմացած պատասխանեց, որ հետազոտություններ չեն արվել, իրենք այդպես են նպատակահարմար գտել, քանի որ դա իրենց միակ տարածքն է:

Աղբանոցները խնդիր են մարզի գրեթե բոլոր համայնքների համար

Քաղաք համայնքի ղեկավար Սեդրակ Դավթյանը անկեղծորեն խոստովանեց, որ աղբահանություն չեն անում: «Ժողովուրդն իր բակում աղբը հավաքում, այրում է»,- ասաց նա, ապա ավելացրեց, որ անհրաժեշտության դեպքում համայնքապետարանը մեքենա է հատկացնում:

Աղբահանությունն առայժմ ոչ լիարժեք է կատարվում հատկապես գյուղական համայնքներում: Իսկ աղբանոցները խնդիր են նաեւ քաղաքային համայնքների համար: Մարզի յուրաքանչյուր քաղաքային համայնք ունի իր թափոնատեղին: Միայն Ծաղկաձորն է օգտվում Հրազդանի աղբավայրից: Բնապահպանության պետական տեսչության Կոտայքի տարածքային բաժնի պետի տեղակալ Արսեն Պետրոսյանի խոսքով՝ դրանցից եւ ոչ մեկը, դե ֆակտո, չի բավարարում օրենքի նոր պահանջները: «Եթե թափոնատեղի է հատկացվում, այն պարտադիր ենթակա է փորձաքննության ըստ կա միջավայրի ազդեցության բոլոր տեսակետներից: Դա կատված է մթնոլորտ արտանետումների, հոսքաջրերի, հողի վրա ունեցած ազդեցության, հոտի, աղմուկի, թափքերի ազդեցության հետ»: Մարզի 67 համայնքներից փորձաքննություն անցած եւ օրենքին համապատասխանող միակ թափոնատեղին Ձորեժում գործող աղբավայրն է, որը շահագործում է «Անկոլ» ՍՊԸ-ն:

Մյուս գյուղական համայնքներ կամ չունեն սեփական թափոնատեղի, կամ դրանց համար նախատեսված հողատարածքներն իրենց կարգերով չեն համապատասխանում նորերին:

Բացի այդ, Կոտայքի մարզը, մայրաքաղաքի հարեւանությամբ գտնվելով, աղբատեղի է դառնում երեւանից դուրս եկող աղբատար մեքենաների համար: Կենցաղային թափոններն աղբավայր հասցնելու փոխարեն շատ հաճախ ընտրվում է ավելի մոտ ճանապարհ, ու աղբը լցվում է մարզի տարածքում: Խնդիրը լուծելու համար Բնապահպանական պետական տեսչության մարզային բաժինը հսկողություն է սահմանել մայրաքաղաքից մարզ մտնող բեռնատարների նկատմամբ: Մի քանիսը հայտնաբերվել են ու տուգանվել: «Բայց ամեն անգամ մենք չենք կարող վերահսկել: Համայնքները պիտի վերահսկեն: Բնապահպանական խնդիրների առաջին պատասխանատուներն ու արձագանքողներն իրենք են: Բայց գործունեության ողջ ընթացքում մենք իրենցից արձագանք չունենք: Ընդհանրապես, մենք ենք իրենց «բռնացնում» ու միջոցներ կիրառում»,- ասաց Ա. Պետրոսյանը:

Բաժնի պետի տեղակալի գնահատմամբ՝ խնդիրների խնդիրն այն է, որ համայնքային աղբավայրերում վտանգավոր աղբը կուտակվում է կենցաղային աղբի կողքին: Բայց այս հարցը հանրապետության մասշտաբով լուծված չէ: «Վտանգավոր թափոնների թափոնատեղիի հարցը կամ նախագծման փուլում է, կամ չկա»,- ասաց նա: Թերի է նաեւ աղբավայրերի շահագործումը, աղբակուտակման գործընթացը, քանի որ «չի կարելի հենց էնպես աղբը տանել, մի փոսի մեջ լցնել»: Նախ՝ անհրաժեշտ է բոլոր նորմերին բավարարող տարածք ընտրել, համապատասխանեցնել հողի կարգը, աղբը լցնելուց ու հողի շերտով այն ծածկելուց զատ կարեւոր է նաեւ թափոնների տեսակավորումն ու մշակումը: Ա. Պետրոսյանը խոսեց աղբի վերամշակման գործարանների կառուցման ծրագրերի մասին՝ նշելով, որ նախաձեռնություն է ցուցաբերել դանիական կառավարությունը: Վտանգավորների դասին է պատկանում նաեւ թռչնաղբի աղբը, եւ այսօր մարզում միջազգային վարկերով ծրագրվում է թռչնաղբի վերամշակումից մեթան գազ, պարարտանյութ ստանալ: Որպես թռչնաղբի կենտրոնացված թափոնավայր է ընտրված Լուսակերտի թռչնաբուծական ֆաբրիկան:

Անօթեւաններն աղբավայրի մեղուներն են

Ինչ վերաբերում է աղբի տեսակավորմանը, Բնապահպանական պետական տեսչության Կոտայքի տարածքային բաժնի պետի տեղակալ Ա. Պետրոսյանի խոսքով՝ «այն, այնուամենայնիվ, կատարվում է: Մարդիկ պոլիէթիլենային ու ապակե ըստ, նյութեր են հավաքում: Դա բերեւացնում է»: Խոսքն աղբարկղերը փորփրող մարդկանց մասին է, որոնք, մասնագետի գնահատմամբ, ակամայից իրենց փոքրիկ ներդրումն են ունենում բնապահպանական այս խնդրի դեմ պայքարում: Վերջիններիս կողմից իրականացվող «մեծ գործի մասին» խոսեց նաեւ «Անկոլ» ՍՊԸ տնօրեն Վաղինակ Հովհաննիսյանը: Այսօր լուրջ խնդիր են պոլիէթիլենային տոպրակները: Դրանց դեմ դժվար է պայքարել: «Ամեն ավտոյի հետեւից պետք է հող լցնել: 13-14 օր մեկ անգամ բոժժերին 4-5 մ շառավղով հավաքել եմ տալիս: Շատ մեծ օգուտ են տալիս: Ամեն մեքենայի հետեւից վազում են: Բոժժերն աղբավայրի մեղուներն են»:

3 տարի առաջ բացված թափոնատեղին միակն է մարզում, որ համապատասխանում է օրենքի պահանջներին: «Հայաստանում միակ օրինական աղբավայրն է, որովհետեւ անցել է բոլոր փորձաքննությունները, ամենակարեւորը՝ էկոլոգիականը: Սովետաբերը քանի՞ տարի է գործում, փորձաքննություն արին, չանցավ»,- նշեց Վ. Հովհաննիսյանը: Աղբավայրի ընդհանուր մակերեսը 6 հա է: Սպասարկում է Ձորեժ գյուղը եւ երեւանի Ավան ու Զեյթուն համայնքները: Ընկերության տնօրենը նախընտրեց չբացել կոմերցիոն գաղտնիքները եւ չխոսեց կատարված ծախսերի ու աղբավայրից օգտվող համայնքների վճարման չափերի մասին՝ նշելով միայն, որ Ձորեժն անվճար է օգտվում աղբավայրից, քանի որ այն գտնվում է իր վարչական տարածքում: «Կախված է ծավալից, ծավալը մեքենաներով ենք որոշում: Ծանր սեզոն կա, թեթեւ սեզոն»:

Վ. Հովհաննիսյանը հայտնեց, որ համայնքներն իրենց բյուջեներով անկարող են նման թափոնատեղի ունենալ: Հիմնական դժվարությունը, վերջինիս խոսքով, կապված է փորձաքննությունների հետ: «Անկոլ»-ում փորձաքննությունները երեք տարի են տեւել: Ընկերությունն իրականացնում է աղբազերծում. աղբը կուտակվում է, այնուհետեւ՝ ծածկվում:

Տուգանքները խնդիրը չեն լուծում

Բնապահպանության պետական տեսչության Կոտայքի տարածքային բաժնի պետի տեղակալ Արսեն Պետրոսյանը նույնպես այն կարծիքին էր, որ մեկ համայնքն այսօր ի վիճակի չէ թափոնատեղի կառուցել, անհրաժեշտ է, որ մի քանիսը միավորվեն: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է նաեւ պետական լիազոր եւ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունը: Բնապահպանական տեսչությունն այսօր իրականացնում է վերահսկման ափսառանքներ, գրեթե բոլոր համայնքներում խախտումներ են գրանցվել, նշանակվել տուգանքներ: Սակայն նույնիսկ շատունակական տուգանքները խնդիրները չեն լուծում, եթե անգամ ուղեկցվում են բացատրական ափսառանքներով: Նախ՝ չկան միջոցներ եւ համապատասխան տարածք կամ, ինչպես սովորաբար լինում է, ֆինանսավորման դեպքում առաջնությունը միշտ տրափելի խնդիրներին է տրվում՝ տանիք, ասֆալտապատում, ջրագիծ եւ այլն: Սակայն չի կարելի այլաթող անել նաեւ աղբանոցների հարցը, քանի որ, մասնագետի գնահատմամբ, նման վիճակը «տիդեմիայի առաջացման, հողերի փչացման, կենսոլորտի վատացման պատճառ կարող է հանդիսանալ»: «Էդ խնդիրը երկրորդային ալանում են թողնում, բայց դա ոռմբ է, որն ամեն րոպե կարող է համաճարակի վերածվել, հողերը անպիտանության հասցնել»,- ասաց Ա. Պետրոսյանը:

Զբոսավայր հասնելուց առաջ զբոսաշրջիկներին աղբակույտերն են դիմավորում

Կոտայքի մարզի 67 համայնքներից բնապահպանական նորմերին համապատասխանող թափոնատեղի ունի միայն մեկը

Նախորդ տարի 150.000 դրամով տուգանվել է նաեւ Արզնի համայնքապետարանը: Պատճառն Արզնի եւ Քարաքաշի սահմանին կուտակված աղբն է եղել, որը գյուղի վարչական տարածքում լցրել են Քարաքաշի ամառանոցների բնակիչները: Ամեն անգամ երեւան գնալիս աղբն իրենց հետ հերու չեն տարել ու կուտակել են հարեւան գյուղի տարածքում: «Հարցը չի կարգավորվում: Պիտի գիշերը գնանք, նստենք, որ չլցնեն: Մի քանի անգամ ցուցանակ ենք գրել-դրել, որ կտուգանվեն 50.000 դրամի չափով, ցուցանակը վերցրել, գցել են ձորը, ու ձորից նույն պատմությունը»,- պատմեց համայնքապետ Մաքսիմ Ավագյանը:

Լինելով նախկին քաղաքային ավան՝ Արզնում կան նաեւ բնակելի շենքեր, ուստի, ի տարբերություն մյուս գյուղերի, անհրաժեշտություն է պարբերական աղբահանությունը: Բայց գյուղն աղբանոց չունի: Աղբը եղվարդի կամ Բյուրեղավանի աղբանոց է տեղափոխվում, սակայն ճանապարհը շատ երկար է: «Բաց մեքենայով որ տանում ենք, ճանապարհին աղբը, տոպրակները թափվում են: Քամին հետ ա բերում: Նման բաներից խուսափելու համար ձեռնու կլինի, որ հենց այստեղ լինի»,-ասաց համայնքապետը: Աղբանոց չունեն նաեւ հարեւան Նոր Գեղին եւ Նոր Հաճն: Երեք համայնքները միասնական աղբանոց ունենալու ծրագիր են մշակել: Նոր Գեղինում համապատասխան տարածք կա, որը նախկինում ավազի հանք է եղել: Տարիների ընթացքում շահագործվել է, ու տեղը մեծ փոս է առաջացել, որը 1 քաղաքային եւ 2 գյուղական համայնքներին 200-300 տարի կբավականացնի աղբ լցնելու համար: «Պայմանավորվել ենք, որ լցնելուց հետո պիտի վառենք, վառելուց հետո էլ, բնական է, ծածկելու խնդիր է լինելու»,- ասաց Մ. Ավագյանը: Ծրագիրն առայժմ փաստաթղթային փուլում է, փորձաքննություն չի անցել: Բացասական եզրակացության դեպքում համայնքապետերը նոր ուղիներ պետք է փնտրեն:

Չարենցավանի աղբը կուտակվում է հարեւան գյուղում

Չարենցավանի աղբանոցի խնդիրը նույնպես տարիների վաղեմություն ունի: Քաղաքապետ Հակոբ Շահգալդյանի ասելով՝ մի քանի տարբերակ փորձել են, առայժմ հաջողության չեն հասել: «Ցանկություն ունեինք աղբավայրն օրինական տեղափոխել Կարենիսի՝ նախկինում շահագործվող հանքերը: Կարենիսի համայնքապետի հետ պայմանավորվել էինք, որ Չարենցավան-Կարենիս ճանապարհն ամբողջությամբ վերանորոգենք, շահագործված հանքերը տարենք Չարենցավանի աղբավայր: Բայց հետո պարզվեց, որ դրա ընդերքով խմելու ջուր է հոսում, եւ աղբը ջրին կվնասի: Դրանից էլ հրաժարվեցինք»,- պատմեց Հ. Շահգալդյանը: Քաղաքի աղբն այսօր կուտակվում է նոր գերեզմանատան մոտակայքում՝ Ալափարսի շուրջ 20 հա մակերեսով հողատարածքում՝ պոլիէթիլենային տոպրակներով ողողելով գյուղի հողերը: Հարեւան գյուղին հողի դիմաց վարձ չեն վճարում, շուրջ 40 տարի սա է եղել Չարենցավանի աղբավայրը: Առայժմ այլընտրանք չկա, թեեւ խնդրի հրատապությունը գիտակցում է նաեւ համայնքի ղեկավարը: Նշենք, որ նախորդ տարի մարզում բռնկված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության առաջին օջախն աղբանոցի հարեւանությամբ գտնող ֆերմայում էր:

Չարենցավանն այսօր համապատասխան հող չունի թափոնատեղի կառուցելու համար. բնակելի տարածքներից դուրս հողեր չունի, ուստի խնդրի միակ լուծումը մեկ այլ համայնքի հետ համագործակցելն է: Համայնքի բյուջեն հողեր գնելու հնարավորություններ չի տալիս: «Հիմա պիտի փորձենք որեւէ համայնքի հետ էլի համաձայնության գալ: Վերջիվերջո, քաղաքը պիտի աղբատեղի ունենա»,- նշեց Հ. Շահգալդյանը: Առայժմ նախկին թափոնատեղիում կուտակված աղբը վերացնում են վառելու միջոցով: Բյուջեից տարեկան 1 մլն 100 հազ. դրամ գումար են հատկացնում աղբանոցի բարեկարգման, փոռաման ու վառակազերծման համար:

ՍԵՌՆ ԳԵՐԵԳՈՐՅԱՆ

Ճամբարակի քաղաքապետարանում լավ գիտեն՝ ինչպես խոչընդոտել լրագրողի մասնագիտական գործունեությանը

Ճամբարակի ավագանու 2007 եւ 2008 թվականներին ընդունած որոշումների արձանագրություններին ծանոթանալու «Հետի» ցանկությունը բախվեց Ճամբարակի քաղաքապետ Յուրա Ավալյանի դիմադրությանը: Նա նշեց, որ իրեմ խնդիր չունեն, սակայն որոշումների մասյանը կարող են տրամադրել միայն գրավոր դիմումի առկայության դեպքում: Քաղաքապետը չցանկացավ թերթել գրառումների մասյանը, որպեսզի մաքրեր այդ նպատակով «Հետի» ուղարկած երկու գրությունները, որոնցով քաղաքապետին տեղեկացվել էր ավագանու որոշումներին ծանոթանալու ցանկության մասին: Եվ հանի որ քաղաքապետը ժամանակին չի արձագանքել գրություններին, ցանկացավ անհրաժեշտ ձեւանալով՝ նոր գրության պահանջ ներկայացնել: Ես էլ փոխադարձաբար քաղաքապետին խնդրեցի ներկայացնել այդ պահանջի օրինականությունը հիմնավորող իրավական ակտը, սակայն այդպիսի հիմնավորում չտրվեց: «Ձեզ համար դժվա՞ր է դիմում գրելը»,- կրկին պնդեց քաղաքապետը՝ փորձելով արդարացնել իր դիրքորոշումը իրականացրածս «ինչպես հեսաբնության» համար:

Արդեն 3 տարի պաշտոնավարող համայնքի հաստատվել է 2006 թ. վերջում, այն չի ծախսվել եւ փոխանցվել է հաջորդ տարվա բյուջե: Պետական բյուջեից 41 մլն 200 հազար դրամ գումարը Ճամբարակի համայնքապետարանին հատկացվել է ՀՀ կառավարության 07.12.06 թ. 1763-Ա որոշմամբ՝ «քաղաքի բնակչանոց գործունեությունն ապահովելու նպատակով»:

Թե ինչպե՞ս է համայնքը դիմել կառավարությանը եւ ստացել վերոհիշյալ աջակցությունը, համայնքի ղեկավարն ունի իր նկատառումները: Նա նշում է, որ մինչեւ իր ընտրվելը, այսինքն՝ մինչեւ 2005 թ. նոյեմբերի 2-ը, քաղաքապետարանը միշտ պարտքեր է ունեցել աշխատավարձի եւ սոցվճարների գծով: Սակայն, իր ընտրվելուց հետո, այլեւս պարտքեր չեն կուտակվել: Ճամբարակի համար «նոր թվարկությունը» սկսվել է քաղաքապետի անմիջական աշխատանքով. «Ես դիմեցի կառավարությանը, որ կան պարտքեր: Եվ կառավարությունն օգնեց ինձ: Գումարը հիմնականում ուղղվեց նախորդ տարիների պարտքերը մարելուն: Հենց այստեղ՝ ես դիմեցի, ինձ օգնեցին...»:

Զարմանալի է կառավարության որոշման մեջ տեղ գտած ձեւակերպումը՝ «քաղաքի բնակչանոց գործունեությունն ապահովելու նպատակով»: Ինչո՞ւ է կառավարությունը որոշել հանրապետության 931 համայնքներից հենց Ճամբարակի բնակչանոց գործունեությունն ապահովել, երբ շատ համայնքներ ունեն աշխատավարձերի կուտակված պարտքեր, բյուջեները գտնվում են արգելանքի տակ ու պարտքերից ազատվելու հույս էլ չկա: Ճամբարակի քաղաքապետ Յու. Ավալյանը կարծում է, որ համայնքի ընտրությունը պայմանավորված է նրա սահմանադրված, հրեշակոծված լինելու, ինչպես նաեւ՝ համայնքի հողերի՝ հեսաբերությունն չներկայացնելու հանգամանքներով: Միանշանակ կիսելով այդ կարծիքը՝ այդտեղ, հնարավոր չէ չհիշել կրկին վաղար վիճակում, այն էլ տարիներ շարունակ պարտքերի տակ գտնվող շատ համայնքներ, որոնք պարտքերի պատճառով զարգացման հեռանկար չեն տեսնում:

Քանի որ Ճամբարակի համայնքապետը քանիցս նշեց իր ընտրվելուց հետո պարտքերը մարելու եւ այլեւս պարտքեր չկուտակելու փաստը, փորձեցի ճշտել, թե նման նախադեպ եղե՞լ է մինչ իր աշխատելը, եւ չէ՞ կարող, արդյոք, համայնքի նախորդ ղեկավարը դիմել կառավարությանն այդ պարտքերը մարելու խնդրանքով: «Չեմ կարող ասել՝ կարո՞ղ էր, թե՝ ոչ, բայց ես մի բան եմ հասկանում, որ ամեն ինչ անձի էության հետ է կապված,- նշեց համայնքի ղեկավարը՝ ավելացնելով-համայնքի նախկին ղեկավարն էլ կարող էր դիմել, չարչարվել, արդյունքի հասնել»:

Կառավարության հատկացումն «իր էությանը» վերադրող համայնքի ղեկավարին հայտնեցի, որ կառավարությունը Ճամբարակին աջակցություն տրամադրել է նաեւ այդքան հիշարժան թվականից՝ 2005 թ. նոյեմբերի 2-ից առաջ, այսինքն՝ համայնքի նախորդ ղեկավար Հայկ Լազարյանի պաշտոնավարման շրջանում: 2003 թ. կառավարությունն այդ տարվա բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդի հաշվին 30.01.2003 թ. 79-Ա որոշմամբ Ճամբարակ քաղաքի համայնքային բյուջեին հատկացրել է 50 մլն դրամ դոտացիա «նախորդ տարիների արդյունքներով առաջացած բյուջետային պարտքերի մարման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու նպատակով»: Եվ ոչ միայն դա: Ճամբարակում ասֆալտապատման աշխատանքների մեկնարկով հոդվածը քաղաքապետին հայտնեցի մեկ այլ փաստ. ՀՀ կառավարության 09.09.2004 թ. 1242-Ա որոշմամբ Գեղարքունիքի մարզպետարանին հատկացվել է 15 մլն դրամ սուբվենցիա՝ Ճամբարակ քաղաքի Գարեգին Նժդեհի կենտրոնական փողոցը վերանորոգելու նպատակով: Բացի այդ, տարեցտարի ատրամադրել այնպիսի հրապարակումներ, որոնք նախատեսված են հենց համայնքի բնակիչների համար: Համայնքի ղեկավարը ժամանակ շահելու եւ բացասական պատասխաններից խուսափելու նպատակով ընտրեց հարցերին հարցերով պատասխանելու մեթոդը՝ ինչ տեղեկություն, ինչ կնշանակի հրապարակել, ինչ կնշանակի բյուջեի կատարողականի հաշվետվություն եւ այլն: Ի վերջո, պարզվեց, որ ինչպես 2007 թ., այնպես էլ 2008 թ. համայնքային բյուջեների վերաբերյալ համայնքապետարանը որեւէ տեղեկատու, գրքույկ, նախորդ տարվա բյուջեի կատարման որեւէ եռամսյա կամ տարեկան հաշվետվություն, հակիրճ, անգամ 1 էջ ծավալով որեւէ նյութ չի հրատարակել, քանի որ «համայնքի բնակիչները չեն հետաքրքրվում»:

Առհասարակ, բյուջեի մասին մեր բազմաթիվ հարցադրումներ չէին սանձում սպառիչ պատասխաններ, քանի որ համայնքապետը մասնագետ էր անում միշտ պատասխանների միակ վայրը՝ հաշվապահությունը: Խնդրեցի նաեւ նշել, թե վերջին 2 ամսում հիշատակության արժանի ինչ աշխատանք է կատարել քաղաքապետարանը: Պարզվեց, որ այդ երջանում իրականացվել են ընտրությունների նախապատրաստական աշխատանքներ, որոնք պարտավոր է անել համայնքը, համայնքի ղեկավարը: Դրանցից ներկայացվեց միայն ընտրատեղամասերի կահավորումը: Գումարներ հատկացվե՞լ են կահավորման նպատակով: «Ոչ, հատկացումներ չենք արել, ուղղակի որտեղ սեղան-աթոռ է պակասել, համալրել ենք»,- ասաց համայնքապետ Յու. Ավալյանը:

Հաշվապահությունից տեղեկություններ ստանալու համար հարկ էր թղթապանակներից պեղել անհրաժեշտ թղթերը: Քաղաքապետարանի ֆինանսատնտեսական բաժնի վարիչ եւ գլխավոր հաշվապահի պաշտոնակատար Կամո Բոզանյանին խնդրեցի տրամադրել համայնքի 2008 թ. բյուջեն՝ վկայակոչելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի հետեւյալ պահանջը. «Համայնքի զարգացման եռամյա ռազմավարական ծրագիրը եւ տարեկան բյուջեն հրատարակվում են»: Նա եւս նշեց, որ իրեմ ոչինչ չեն հրատարակել: Փորձեցի ճշտել, թե ինչ կտրամադրեն Ճամբարակի հասանելի բյուջեին ծանոթանալու համար: Նոր եւ դեռեւս պաշտոնակատարի կարգավիճակ ունեցող բաժնի վարիչը զարմացավ՝ «ինչի՞ համար բնակիչը պիտի բյուջեի մասին թուք ունենա, դա հաշվապահական փաստաթուղթ է, ինձարկում կլինի, թող գա, մասնակցի»:

Աշխատակազմի քարտուղար Ֆլորա Սարգսյանը կատարեց իր խոսքումը եւ ժամը 15-ից հետո տրամադրեց ավագանու որոշումների արձանագրությունների մասյանը: Սակայն 10 րոպե անց, պատասխանելով բջջային հեռախոսով ստացած զանգին, ասաց, որ ինքը 5-10 րոպեից կվերջացնի եւ դուրս կգա: Ես շարունակեցի իմ աշխատանքը: Ապա նա ինձ ծանոթացրեց աշխատասենյակ մտած իր դստեր հետ: Թերթելով եւ գրառումներ կատարելով մասյանից՝ որոշ հարցեր ուղղեցի քարտուղարին համայնքապետարանի 2007 թ. հաստիքների եւ դրույքաչափերի մասին: Մասնավորապես զարմանալի էր ֆինանսատնտեսական բաժնի 2 գլխավոր մասնագետների համար սահմանված 40800 դրամ եւ 55000 դրամ դրույքաչափերի կտրուկ տարբերությունը: Տարբերություններ կային նաեւ քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետների համար սահմանված 33000, 40000 եւ 30000 դրույքաչափերի միջեւ: Այս հարցերին աշխատակազմի քարտուղարը կցկտուր եւ ոչ լիարժեք պատասխաններ տվեց: Ապա դուրս եկավ՝ դստեր հետ ինձ թողնելով աշխատասենյակում: Վերջինս, տեսնելով, որ մասյանից գրառումներ եմ կատարում, ասաց, որ արտագրելու իրավունք չունեմ: Որոշեցի չշեղվել իմ աշխատանքից, սակայն նա շարունակեց պնդել իր ասածը: Աստիճան էի պատասխանել, որ ինքը մասնավոր անձ է, եւ խնդրեցի չխանգարել ինձ: Սակայն դա էլ չօգնեց: Նա նշեց, որ ինքը քաղաքապետարանի աշխատակից է, սակայն չհայտնեց, թե ինչ պարտականություններ ունի եւ շարունակեց խոչընդոտել իմ աշխատանքին: Հետագայում պարզվեց, որ աշխատակազմի քարտուղարին պաշտոնում էր նրա դուստրը՝ Ճամբարակի ՔԿԱԳ-ի պետը:

Աշխատակազմի քարտուղարի վերադառնալուց հետո կրկին չհաջողվեց իրականացնել ավագանու որոշումների մասյանի ուսումնասիրությունը: Բջջային հեռախոսով անընդհատ զանգահարում էին նրան, նա էլ պարբերաբար խոսանում էր 5-10 րոպեից դուրս գալ, սակայն չէր կարողանում խնդրել, որ ավարտեմ աշխատանքս: Նաեւ հաղորդեց, որ դուրս է գալիս համայնքի բնակիչների բնակարաններ այցելելու նպատակով: Ավելորդ է ասել, որ հոգեբանական հարկադրանքի նման պայմաններում աշխատել, այն էլ ձեռագիր մասյան ուսումնասիրել՝ հնարավոր չէր: Հերթական հեռախոսազանգից հետո խնդրեցի տրամադրել որեւէ աշխատասենյակ, որտեղ համայնքապետարանի ցանկացած աշխատակցի ներկայությամբ հնարավոր կլիներ ծանոթանալ ավագանու նիստերի արձանագրություններին: Մի քանի անգամ հրաժարվելուց եւ ներողություն անելուց հետո աշխատակազմի քարտուղարը համաձայնեց՝ հրավիրելով փոխքաղաքապետ Ազատ Թորոսյանին:

Սակայն այս անգամ էլ գործը տեղից չշարժվեց, քանի որ մինչեւ աշխատանքային օրվա ավարտը զրուցեցինք օրվա անցուդարձի մասին: Փոխքաղաքապետի ակնհայտ բարեկրթությունն ու լավատեղյակությունը կարողացան փոխել օրվա բացասական տպավորությունները, ինչպես նաեւ՝ գրավական դարձան հաջորդ անգամ Ճամբարակի ՏԻՄ-ի հետ աշխատելու եւ ավագանու նիստերի մասին նյութ պատրաստելու համար: Այդ տպավորությունները թույլ են տալիս նաեւ ենթադրել, որ մեր հետագա հետազոտություններով կկարողանանք հասնել Ճամբարակի քաղաքապետարանի գործունեության մեջ օրենքների իրականացմանը, քանի որ մեր վերջնանպատակը թերությունների սուսկական արձանագրումը չէ, այլ դրանց օրենքը՝ ի նպաստ տեղական ինքնակառավարման սկզբունքների իրականացման:

ԱՌՈՒԵՆ ՄՈՓԵՍՅԱՆ

Հայրենիքիս մոռացված անկյունը՝ Բարեկամավան

Վերջերս Բարեկամավանցի երիտասարդն ամուսնության առաջարկ է արել Նոյեմբերյանի տարածաշրջանի գյուղերից մեկում բնակվող մի աղջկա: Վերջինս հավանել է տղային, սակայն համաձայնվել է՝ պայմանով, որ Բարեկամավանում չպիտի ապրեն: Տղան հոյատարեն ասել է՝ ես պիտի ապրեմ հայրենի գյուղում:

Տավոլ, այսպիսի երիտասարդներ շատ քիչ են մնացել Բարեկամավանում՝ ընդամենը 25 հոգի:

Նոյեմբերյանի վարչատարածքի Բարեկամավան գյուղը գտնվում է ձորի մեջ, Նոյեմբերյան քաղաքից 33 կմ հեռավորության վրա: Շաբաթվա 5 օրերին հարեւան Կոթիից ավտոբուս է իջնում գյուղ՝ բարեկամավանցիներին նախկին շրջկենտրոն հասցնելու համար: Նոյեմբերյան մեկնելու ու վերադարձի համար գյուղացիները 200 դրամ են վճարում:

Բարեկամավանը սահմանակցում է Ղազախի շրջանի 3 մեծ գյուղերի: Հայկական հինավուրց Թաւլաձոր գյուղի՝ Բարեկամավանի 220 սներից 100-ի դուռը ներկայումս փակ է, բնակչության 80 տոկոսը ծերեր են: Գյուղի միջնակարգ դպրոցում 44 աշակերտ կա, մինչդեռ 1970 թ. տեղի ութամյա դպրոցի միայն առաջին դասարան հաճախում էր 47 երեխա: Այժմ ՌԴ Բելգորոդի մարզի մի գյուղի դպրոցում 63 բարեկամավանցի աշակերտ է սովորում, Սպավորոյի մարզում՝ 130: Համայնքապետ Հովիկ Ղարաբեջիյանի խոսքերով՝ Մոսկվայի բուհերում հիմա կրթվում է 33 բարեկամավանցի ուսանող: Դժվար թե նրանք վերադառնան իրենց ծննդավայրը, որովհետեւ մարդիկ այստեղ ապրում, ավելի ճիշտ՝ գոյատեւում են ծայրահեղ պայմաններում: Դպրոցի հետ կապված մեկ այլ մտահոգություն կա. անգլերեն, ռուսերեն լեզուներ եւ ֆիզիկա ուսուցանողները երեւանի, Վանաձորի եւ Նոյեմբերյանի բնակիչներ են: Անգլերեն եւ ֆիզիկա դասավանդող երիտասարդները մի քանի տարի առաջ հեռավոր գյուղում մանկավարժությունը գերադասել են ազգային բանակում ծառայելուց: Հիմա նրանց պարտադիր մանկավարժության ժամկետն ավարտվում է, օրենքն էլ փոխվել է. այսուհետեւ հնարավոր չի լինի բանակում չծառայողների հաշվին համալրել Բարեկամավանի դպրոցի մանկավարժների կազմը: Բարեկամավանցիները չգիտեն, թե հետագայում ինչպես է լուծվելու այս առարկաների դասավանդման խնդիրը:

Ժամանակին սա Բարեկամավանի մշակույթի տունն էր

Հեռավոր, սահմանամերձ բնակավայրում երիտասարդները հանգստի, ժամանցի հնարավորություններ չունեն: Մշակույթի տունը 50 տարվա մի շինություն է, որը հին «սարայ» է հիշեցնում՝ կիսախանդ, փլված տանիքով: Համայնքապետարանը հարկադրված է եղել գյուղի գրադարանի 4000 կտոր գիրք տեղափոխել դպրոց, եւ հիմա գրադարանն այնտեղ է տեղակայված: Բարեկամավանում միայն Հայաստանի հանրային հեռատաքնկերության արբանյակային ծրագիրն են դիտում (առանց «Օ2»-ի եւ ԱԺ հարցուպատասխանի) եւ ռուսական «ՈՏՌ Պլանետա»: Բարեկամավանում հնարավոր է դիտել բազմաթիվ ադրբեջանական եւ վրացական հեռուստաալիքներ: Համայնքապետն ասում է, որ նախընտրական շրջանում դիմել է վարչապետ Սերժ Սարգսյանին՝ ընդունվող հայկական ալիքների թիվն ավելացնելու խնդրանքով: Արդեն մասնագետներ են եկել, չափումներ արել, եւ որն Ղարաբեջիյանը լիահույս է, որ այս հիմնահարցը կլուծվի:

Կյանքի, կենցաղի, ակտիվ հանգստի խնդիրներին այստեղ ավելանում է ադրբեջանական գնդակոծությունների վտանգը: Բազմաթիվ բարեկամավանցիներ են զոհվել, վիրավորվել, գերեվարվել ադրբեջանցիների կողմից, անգամ 1994 թ. հրադադարի հաստատումից հետո: Բնակիչները վկայեցին, որ վերջին գնդակոծությունը մարտի վերջին է տեղի ունեցել: Գյուղացին պետք է ադավիճի հողին, սակայն այստեղ հող մշակելու հնարավորություն չկա: Հաշվառմամբ՝ 585, փաստացի 340 բնակիչ ունեցող գյուղը 480 հա վարելահող ունի, 70 հա՝ տնամերձ, եւս 60 հա՝ համայնքային հող:

Հողերը սահմանամերձ են, ականապատված կամ գտնվում են ադրբեջանական ուղիղ նշանառության գծերո եւ չեն մշակվում: Համայնքային 60 հա հողերն էլ չեն մշակվում կոմբայն չունենալու պատճառով: «7 տարի հացահատիկ են ցանել, բայց կոմբայնը մեր գյուղ էր գալիս ամենավերջում, մյուս գյուղերի արտերը հնձելուց հետո, օգոստոսի 25-ին, երբ գերհասունացած ցորենն արդեն թափված էր հասկերից»,- պարզաբանում է Հովիկ Ղարաբեջիյանը: Հիմա այդ հողերը որպես խոտհարք են օգտագործում, գյուղացիներին բաժանում, որպեսզի անասնակեր կուտակեն:

Մի հոգս էլ ոռոգման ջրի իսպառ բացակայությունն է: ՄԱԿ-ի փախստականների հովնգական խորհրդի ֆինանսավորմամբ 2004 թ. այստեղ ջրագիծ են կառուցել, որը ձգվում էր գյուղի վերեւում գտնվող աղբյուրից: Կառուցելն այստեղ անհամապատասխան բան է, ավելի ճիշտ կլինի ասել՝ թերակառուցել են: Համայնքի ղեկավարի խոսքերով՝ իմը չի սարքել շինարարության ավարտի ակտը, որովհետեւ գավառցի շինարարները դեռ խողովակները չեռակցած՝ դրանք միացման տեղերից պոկվում էին: Հիմա այս ջրատարն անգործության է մատնված, խողովակները թափված են անմատչելի տեղանքում՝ բլուրների վրա: Նման ծանր պայմաններում բարեկամավանցիներն, այնուամենայնիվ, ապրում, աշխատում եւ հարկեր են վճարում:

Անցյալ տարի համայնքի բյուջեն կատարել է: Բարեկամավանի 2008 թ. բյուջեն կազմում է 5 մլն 457 հազար դրամ, որի մեջ զգալի մասն է կազմում պետական լրավճարը՝ 4 մլն 159 հազար դրամ: Համայնքի ավագանին ամբողջությամբ համալրված չէ. ընդամենը 4 հոգի են ցանկացել ավագանու անդամ դառնալ: Ավագանին պարբերաբար նիստեր հրավիրելով, բյուջեն հաստատելուց զատ, որոշումներ է ընդունել «Վարձատվող հասարակական աշխատանքներ» ծրագրով կատարվող գործերի, առավել կարիքավոր անձանց 20 հազար դրամով օժանդակելու, «Բնական պաշարների կառավարման եւ չքավորության նվազեցման» ծրագրով կարիքավոր 5 ընտանիքի 3-ական մեղվաընտանիք հատկացնելու, գյուղի բարձունքում «Ղ-Տելեկոմին» եւ «Արմենտելին» կայի աշտարակի համար տարածք տրամադրելու եւ այլնի մասին: Հիմա էլ ավագանու անդամները շրջում են թաղերում, զուգում մարդկանց հետ, որպեսզի որոշեն, թե Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ գյուղում առաջիկայում ինչ ծրագիր իրականացնեն՝ արտեզյան հորից սնվող խմելու եւ ոռոգման ջրագծի՞, թե՞ համայնքային կենտրոնի կառուցման:

Սակայն գյուղում բոլորը համակարծիք են մի հարցում՝ Բարձրալ խաչի կառուցումը պիտի ավարտվի: Գյուղի անտառապատ բարձունքում, սահմանից իշ հեռու գտնվող այս եզակի հուշարձանը նախահիստորիական շրջանի բազմանիստ աշտարակաձեւ դամբարան է, որի լուսամուտին միջնադարում խաչ է ագուցվել, որպես բեմի սեղան, խաչքար է կանգնեցվել, եւ դամբարանը վերածվել է մատուռի: 2004 թ. պետբյուջեից 20 մլն դրամ հատկացվեց մատուռի նորոգման համար: Ալավերդցի շինարարները նորոգումը բարեխղճորեն են կատարել, սակայն գումարը բավարար չէր, տանիքը բաց է մնացել, եւ տեղումները վնասում են այս նշանավոր կոթողը: Մինչ մեր հարեւաններն իրենց համար պատմություն են հորինում, մենք անավարտ ենք թողնում սահմանին հառած հայոց հնադարյա պատմության վկա հուշարձանի նորոգումը:

Այո, հայրենիքը սկսվում եւ ավարտվում է սահմանով, իսկ սահման պահող զինվորի թիկունքին սահմանամերձ ժողովուրդն է, որը կյանքի ավելի լավ պայմանների է արժանի:

Բարեկամավանից մեղավորի զգացողությամբ եմ հեռանում, կարծես կռվի մեջ անօգնական եմ թողել ընկերոջս:

Ռ. ՄԱՐԳՍՅԱՆ

Համայնքապետը տեղյակ չէ՞ր հողի վաճառքից

Իջեւանի տարածաշրջանում, ընդունված «ավանդույթի» համաձայն, համայնքապետարանների շենքին պետք է փակցված լինի Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդանիշ արձիվը: Ենոքավանի համայնքապետարանն էլ բացառություն չէ: Ավելին, համայնքապետ Ալիբեկ Բաբայանի գլխավերեւում համագյուղացի կոմունիստ գործչի՝ Ենոք Մկրտումյանի դիմանկարն է, ով, գյուղի ղեկավարի հավաստմամբ, կյանքից շատ վաղ է հեռացել՝ 21 տարեկան հասակում:

«Հայրը հարուստ է եղել, եւ նա հոր հարստությունից նվիրաբերել է ժողովրդին՝ մինչեւ 3 տարեկան երեխաների համար դպրոց է բացել»,- բոլշեւիկ Մկրտումյանին ներկայացնում է համայնքապետը: Դժվար է պատկերացնել, թե մինչեւ 3 տարեկանների համար ինչ դպրոց կարող էին կառուցել 20-րդ դարի սկզբին, գավառական խուլ համայնքում, հատկապես, երբ 100 տարի անց էլ Ենոքավանում շատ բան չի փոխվել: 546 բնակիչ, 253 հա վարելահող, 268 հա խոտհարք եւ 802 հա արոտավայր ունեցող գյուղի անցյալ տարվա բյուջեն կազմել է ընդամենը 6 մլն 648 հազար դրամ: Հարկերը հավաքագրվել են 87 տոկոսով: Բյուջեի զգալի մասը ծախսվում է համայնքապետարանի 9 աշխատողներին աշխատավարձ վճարելու համար:

«Մի փիլ պպակս ենք հավաքել սեփականաշնորհված եւ վարձակալված հողերի հարկը»,- իրավիճակը ներկայացնում է համայնքապետն ու արդարանում նրանով, որ անցյալ տարի եղանկն անբարենպաստ է եղել բերքի համար: Ենոքավանցիները ցորեն, կարտոֆիլ եւ եգիպտացորեն են ցանում, սակայն՝ առանց ոռոգման ջրի: Ցորեն փիլ են ցանում, որովհետեւ գյուղում հացահատիկահավաք կոմբայն չկա: Համայնքապետն ասում է, որ 140 հա վարելահող որպես խոտհարք է օգտագործվում:

Ավագանու նիստերի արձանագրության մասյանի համաձայն՝ Ալիբեկ Բաբայանն ավագանուն առաջարկել է 2007 թ. աշխատանքները գնահատել «բավարար», քանի որ «հողի հարկի 3 մլն 143 հազար դրամից հավաքագրվել է 2 մլն 614 հազար 300 դրամ, նույն համամասնությամբ են գանձվել նաեւ մյուս հարկատեսակները:

Ավագանին 2008 թ. բյուջեն եկամտային մասով հաստատել է 6 մլն 203 հազար 700 դրամ, ծախսերի մասով՝ 7 մլն 217 հազար 500 դրամ: Տարբերությունը կազմում է 1 մլն 13 հազար 800 դրամ: Որտեղի՞ց գոյացավ այն: Համայնքապետը նշեց, որ մոտ 125 հազար դրամ մնացորդ են ունեցել, մնացած շուրջ 800 հազար դրամն էլ առաջացել է նախկին ֆերմայի շրջակա տարածքի վաճառքից: «Պուտուր գումար է, մուտք է արվել ֆոնդային բյուջե»,- ասաց համայնքապետը: Գումարը, որն Բաբայանի խոսքերով, համայնքապետարանի հաշվին մուտք է եղել 2007 թ. հոկտեմբերին կամ նոյեմբերին: Ըստ նրա՝ այդ ֆերման մոտ 15 տարի առաջ վաճառվել է, այնուհետեւ մի քանի անգամ վերավաճառվել եւ վերջում բաժին է հասել «Աստղաբլուր» ՍՊԸ-ին, որի տնօրենը Սուրեն Չիբուխչյանն է: Համայնքի ղեկավարը հստակ չէր կարողանում բացատրել՝ ֆերմայի՞, թե՞ հարակից 6000 քմ հողի վաճառքից է գումարը մուծվել համայնքի բյուջե, եւ նախկինում ֆերման օտարվել է շրջակա տարածքի՞ հետ, թե՞ առանց դրա: Նա այդ «պուտուր» գումարը ներկայացնում էր որպես ինչ-որ «կադաստրային վճար»:

«Ինչու՞ այդ հողի վաճառքի վերաբերյալ ավագանին ոչ մի որոշում չի ընդունել»,- մեր հարցին ի պատասխան՝ համայնքապետը բջջայինով զանգահարեց մեկին՝ խորհրդատվություն ստանալու համար: Վերջինս, ամենայն հավանականությամբ, «Աստղաբլուր» ՍՊԸ-ի ղեկավարներից էր: Պրն Բաբայանն այնքան էլ ցանկություն չուներ նշելու նրա պատճառը, միայն ասաց, որ նա Միհա Ճաղարյանն է: Վերջինս համայնքապետի հետ հեռախոսազրույցի ժամանակ հարցրեց, թե լրագրողի ինչի՞ն են պետք այդ վաճառքի մանրամասները: Համայնքապետն, ըստ ամենայնի, չէր տիրապետում վաճառքի հետ կապված տեղեկատվությանը եւ զրույցի ժամանակ մի քանի անգամ խնդրեց անջատել ծայնագրիչը: 2005 թ. նոյեմբերի 1-ից պաշտոնավարող Բաբայանն, ի վերջո, հայտնեց, որ նախկինում ֆերման վաճառվել է հողի հետ, եւ ամեն անգամ վերավաճառելիս հողի վաճառքի գինը մուտք է լինում համայնքապետարանի բյուջե: Նա նաեւ խորհուրդ տվեց այդ հարցով դիմել Անբարձ գյուղի կադաստրի պետական կոմիտեի Իջեւանի տարածքային ստորաբաժանման ղեկավար Կոլյա Խաչատրյանին: Վերջինս պարզաբանեց, որ հողը չէր կարող վաճառվել մինչ 2005 թ. նոյեմբերի 26-ին Հողային օրենսգրքի ընդունումը, որով օրենքի ուժ է ստացել հողի սեփականության իրավունքի օտարումը, եւ վերավաճառքի դեպքում հողի գումարը մուտք չի գործում համայնքային բյուջե, համայնքապետարանին վճարել են, երբ նա օտարել է հողը: Ստացվում է, որ հենց 2007 թ. աշնանն էլ տեղի է ունեցել 6000 քմ հողի օտարումը «Աստղաբլուր» ՍՊԸ-ին: Ուրեմն, գյուղի կենտրոնական մասում գտնվող 1 հա տարածքն օտարվել է ընդամենը 133 դրամով, ինչը հավանական չէր կարող լինել իրական անուղի դեպքում: Համայնքապետը չասաց, որ այս տարածքում սղոցարան է գործում, որը, Ենոքավանցիների վկայությամբ, փաստացի պատկանում է համագյուղացի, Մոսկվայում բնակվող Արսակ Չիբուխչյանին: Վերջինս «Ապագա տուր» ՍՊԸ-ի սեփականատերն է: Այս ձեռնարկությունը, համայնքապետի խոսքերով, 2005 թ. մայիսին անուղղով ձեռք է բերել 10 հա հող, նաեւ վարձակալել է 14 հա խոտհարք: Գյուղից վերեւ «Ապագա տուր» տուրիստական հրթեքներ է կառուցում, նաեւ զբաղվում է 70 գլուխ խոշոր եղջերավոր անասունների խնամքով:

Համայնքապետարանի միակ համակարգիչը Արսակ Չիբուխչյանն է նվիրել: Անցյալ տարվա աշնանը վարձատվող հասարակական աշխատանքների ծրագրով գյուղում ջրահեռացման համակարգի եւ խմելու ջրատարների նորոգման աշխատանքներ են կատարվել եւ, համաձայն ավագանու 2007 թ. նոյեմբերի 23-ի արձանագրության, քանի որ «գյուղը հնարավորություն չունի» ծրագրում ներդրում կատարելու, այն կատարել են «Ապագա տուր» ՍՊԸ տնօրեն Ժորա Գաբրիելյանը (300 կգ ցեմենտ է հատկացրել) եւ նույն Արսակ Չիբուխչյանը (150 լ դիզելային վառելիք է տրամադրել):

Մի՞թե համայնքային սեփականությունն իրական անուղղով օտարելու դեպքում համայնքապետարանը պահանջված ներդրումը կատարելու հնարավորություն չէր ունենա, գոնե այն չափով, ինչքան որ ցուցաբերել են Ենոքավանցի «բարեւարները»:

ՌԱՖԻ ՄԱՐԳՍՅԱՆ

Ծաղկաշենում մարդիկ ոչ միայն ապրում են, այլեւ հարկեր են վճարում

Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքը մարզկենտրոն Գավառից ընդամենը 10 կմ է հեռու, սակայն երբ հասնում ես Ծաղկաշեն, թվում է, թե խաղաքաղաքությունից հեռացել ես հարյուրավոր կիլոմետրով: Իհարկե, սա չի նշանակում, թե Գավառը խաղաքաղաքության վկայությունն է: Գավառ-Ծաղկաշեն ճանապարհի՝ արքանցի վերածված մի նկատելի հատված ակնհայտորեն բացառում է այդպիսի մեկնաբանությունը: Ու եթե Գեղարքունիքի մարզկենտրոնի ծայրամասն է այդպես բարձրորակ վիճակում, ապա ինչպես խնդիրներ կլինեն սարերի փեշերին գտնվող Ծաղկաշեն գյուղում:

Ծաղկաշենը Գավառի վարչատարածքի միակ համայնքն է, որ գտնվում է այդպես մեկուսացած դիրքում: Նույնպես չեն նաեւ բնակլիմայական պայմանները: Ծաղկաշենի վարելահողերը գտնվում են ծովի մակերեւույթից 2300-2400 մ, խոտհարքերի մեծ մասը՝ 2400 մ, իսկ արոտավայրերը՝ մինչեւ 2480 մ բարձրության վրա: Համայնքի՝ բարձրադիր լինելու հանգամանքը չի նպաստում հողագործության զարգացմանը: 20 տնտեսություններ սարերի թեք լանջերին գտնվող իրենց հողերը սեփականաշնորհումից ի վեր չեն կարողացել օգտագործել, հանի որ ճնշալից հողմ ցրերը խոր ու մեծ առուներ են բացել այդ հողակտորներում: Անասնապահությունն էլ չի զարգանում, հանի որ ծախսերը չեն արդարացվում: 1 խոշի հանի հաշվով ծախսերն այս տարի կազմել են 550 դրամ, մինչդեռ համայնքում այն վաճառվել է 600 դրամով: Այդ պատճառով էլ մարդիկ մեծաքանակ նախընտրում են գնել եւ ոչ թե հավաքել խոզը:

Վաս են գործերը նաեւ ջրամատակարարման ոլորտում: Ողորմած ջուր համայնքը չունի, իսկ խմելու ջրի հարցը լուծվել է համայնքում տեղադրված 6 ծորակների միջոցով, որոնք ինքնահոս ջուր են մատակարարում: Որեւէ տնտեսություն իր բակում, առավել եւս տանը, ջուր չունի: Իսկ այս տարվա ցուրտ օրերին համայնքի բնակիչները միայն մեկ ծորակից էին ջուր վերցնում, հանի որ մնացած 5-ը սառել էին: Գյուղի տձեր կեսից ավելին, որոնք գտնվում են Գավառագետի ափին, հարցը լուծել են ջրհոր փորելով: Սակայն ջրհորներից հանած ջուրը, որ գրանում է գետի ջրերի ու ճնշալի աղյուսներում, մաքուր չի, ուստի օգտագործում են միայն անասունների համար: Անցած ձմռանը, երբ սառել էր անգամ ինքնահոս ջրի ակունքը, մարդիկ ստիպված էին խմելու նպատակով օգտագործում էին ջրհորների ջրերը: Սակայն այս ջրհորներն էլ սեզոնային են, գետի վարարումներից ու ճնշալից հետո դրանք լցվում են:

Ծաղկաշենն ունի 661 բնակիչ, 176 տնտեսություն, եւ համայնքի գրեթե բոլոր ընտանիքներն էլ դրսում աշխատող 1-2 մարդ ունեն: Այլապես, համայնքում մնալով, տուն-տեղ պահելու հնարավորություն չկա:

Անհարմար համայնքապետարանում աշխատանքային բավարար պայմաններ չկան

Այս իրավիճակում առթն «օրինապահ» է թվում համայնքապետարանի եւ համայնքային ենթակայության 2 կազմակերպությունների (գրադարան, մշակույթի տուն)՝ տարիներ շարունակ կուտակած աշխատավարձերի ու սոցվճարների պարտքերի առկայությունը: Այս խնդիրը ճնշակվել է Ծաղկաշենի 2008 թ. հունվարի 15-ի ավագանու նիստում, եւ ավագանու որոշմամբ հաստատվել է ժամանակացույց, ըստ որի՝ նախատեսվել է 6 միլիոն 796 հազար դրամ պարտքը մարել առաջիկա 7 տարիների ընթացքում:

Համայնքապետարանն ունի նաեւ 303 հազար 400 դրամ գույքահարկի եւ 3 մլն 452 հազար հողի հարկի արտաքներ: Գույքահարկի արտաքները հիմնականում գոյացել են չշահագործվող, սակայն հաշվառման մեջ գտնվող 20-25 տարեմտրային միջոցների համար չկատարվող վճարումներից: Հողի հարկերի արտաքներն առաջացել են հողերի չօգտագործվելու, ինչ եկամտաբերության եւ այլ օբյեկտիվ պատճառներով:

2008 թ. ընթացքում Ծաղկաշենում ավագանին արդեն 3 նիստ է հրավիրել եւ հաստատել է որոշումներ համայնքի 2007 թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության, 2008 թ. բյուջեի, անասնագլխաքանակի հաշվառման մասին եւ այլն: Ավագանու նիստերի արձանագրության մասյանում նիստերը պատված արձանագրված են, ելույթները մեջբերված են հասկանալի համառոտագրությամբ, ինչը դժվար է նկատել այլ համայնքների շատ արձանագրություններ ուսումնասիրելիս: Համայնքի ավագանու անդամ Տանիկ Պարոնյանը նշեց, որ ավագանու նիստերի մասին իրենց տեղեկացնում են օրենքով սահմանված ժամկետներում, ավագանու նիստերի մասին նախապես հայտարարություններ են տեղադրվում համայնքի 2 ցուցատախտակներին:

2007 թ. Ծաղկաշենն էական աջակցություն է ստացել պետությունից: Վերանորոգվել են Գավառագետի վրա կառուցված 3 կամուրջներից 2-ը, որոնք քանդվել էին գետի գարնանային հեղեղումներից:

Ծաղկաշենի ու ծաղկաշենցիների վիճակը բնութագրական է հանրապետության բազմաթիվ այլ համայնքների համար: Փոքր, հեռավոր, մեկուսացած, բարձրադիր ու սահմանամերձ համայնքների խնդիրների շարանն անվերջ է: Մեծ համայնքներն էլ իրենց խնդիրներն ունեն, սակայն ակնհայտ է մի բան. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի կարգավիճակ ունեցող 45 բնակչով Գեղահովիտ, 661 բնակիչ ունեցող Ծաղկաշենի, 11 հազար բնակիչ ունեցող Վարդենիկի կամ 26 հազար 400 բնակիչ ունեցող Գավառի միջեւ հավասարության նշան է դրված: Իսկ եթե Գեղարքունիքի մարզի այս համայնքների բնակչության թվաքանակի հետ համեմատենք մարզի կարգավիճակ ունեցող Երեւանի համայնքներից մեկի բնակչության թվաքանակը, պարզապես տխուր ու միաժամանակ զավեշտալի կլինի: Նաեւ՝ անարդար...

Բնական է, որ համայնքի զարգացման հեռանկարն այս պարագայում դժվար է պայմանավորել ներին հնարավորություններով ու ռեսուրսներով, իսկ արտաքին հնարավորություններին ու աջակցություններին արագընթացը փոխում է տեղական ինքնակառավարման բովանդակությունն ու իմաստը: Յուրաքանչյուր խնդիր հիշեցնելուց հետո ծաղկաշենցիներն արտահայտում են իրենց ակնկալիները կառավարությունից: աջակցություն ստանալու մասին: Մինչդեռ սա չի խոսում հոգուս արտակենտրոնացման, որին, իբրեւ թե, ձգտում են մեր իշխանությունները՝ միաժամանակ անուր պահելով այն թելերը, որոնք վերահսկելի ու կառավարելի են դարձնում ՏԻՄ-երին: Սակայն վերահսկելի ոչ թե տեղական ինքնակառավարման սկզբունքների կենսագործման, այլ հենց իշխանությունների վերարտադրության արտահայտման գործառույթների առումով:

Երբ Ծաղկաշենի մասին տպավորություններս նկարագրում էի Գեղարքունիքի մարզի համայնքներին լավատեղյակ մի ֆինանսիստի, վերջինս ուշագրավ կարծիք հայտնեց. «Ախր այդ սարերի տակն ապրող ժողովրդին միայն այդ տարածքում ապրելու համար պարզապես պետք է ազատել հարկերից»:

ԼԻԼԻԹ ՄՈՒՇԵԳՅԱՆ

Համայնքապետարանն իր հարկի տակ պատսպարել է բոլոր կառույցները

Արարատի մարզի Արտաշատի ենթաբերջանի Ազատավան գյուղի բնակիչների սոցիալական վիճակը, համայնքապետ Սարգիս Խալաթյանի ներկայացմամբ, այնքան էլ վատ չէ: «Եթե համեմատենք նախորդ տարիների հետ, տարբերություն կա, բայց խնդիրներն էլ շատ են, դրա համար էլ դժվարանում են հարկերը մուծել»: Միաժամանակ նշում է, որ նույն՝ հարկերը մուծել դժվարացող գյուղացու տանը երեք-չորս քրջային հեռախոս կա: «Վերջերս գյուղում ֆիքսված հեռախոսակապ էին անցկացնում, եւ գրեթե 300 տուն բաժանորդագրվելու ցանկություն հայտնեց: Սելիտրայի համար գումարն անմիջապես ծարվում է, բջջայինի վճարների համար միշտ կա, ֆիքսված կապի համար կա, տունը ջեռուցելու համար ամսական 30-40 հազար դրամ գումար կա, բայց հարկերի համար գյուղացին փող չունի»,- շարունակում է համայնքապետն ու, ինքն իրեն հակասելով, նշում, որ գյուղում տարեկան 70 ընտանիք նպաստ է ստանում: Սակայն, համայնքապետի ասելով, հիմնականում բազմանդամ ընտանիքներն են, միայնակ կենսաթոշակառուներ, որոնք ի վիճակի չեն հող մշակել, կամ նաեւ «միայնակ ծնողներ», որոնց երեխաները հեռացել ու մոռացել են նրանց: Այնպես որ, ստիպված են ամեն տարի համայնքի բյուջեից սոցիալական օգնության ֆոնդին 4 մլն դրամի չափով գումար հատկացնել: «Երբեմն հարկ եմ ուզում, բայց գիտեմ, որ մարդն օրվա հացի փող չունի: Երբեմն էլ գալիս խնդրում են՝ մի քանի կոպեկ տվեք հաց առնեմ, մինչեւ տեսնեմ՝ ինչ է լինում»,-ասում է Ս. Խալաթյանը: Օգնում են ամառանոցային ընտանիքներին, ազատամարտիկների ընտանիքներին՝ տարեկան երկու անգամ, մահվան դեպքում 40 հազար դրամ գումար է տրվում: Ծրագրել են այս տարվանից ուսանողներին էլ օգնել:

Ազատավանում գրանցված 3400 մարդուց ավելի քան 400-ը, հիմնականում երիտասարդներ, հանրապետությունից դուրս են գտնվում: Աշխատում են, օգնում այստեղ ապրող հարազատներին: Իսկ ընդհանրապես այս գյուղի բնակիչների ապրուստի հիմնական միջոցը հողն է: Մարդիկ զբաղված են հիմնականում պտուղ-բանջարեղենի մշակությամբ, ոմանք՝ նաեւ անասնապահությամբ: Կան նաեւ ջեռոց ունեցող տնտեսություններ, որոնց սոցիալական վիճակը համեմատաբար բարվոք է: Նաեւ հարկերն են ժամանակին վճարում: Ինչ վերաբերում է հարկերը հավաքելուն, համայնքապետի ասելով՝ 2007 թ., գրասահարությամբ ու կարկասահարությամբ պայմանավորված, հավաքագրվել է հողի հարկի 60%-ը, որ բացարձակ թվով կազմել է 3.5 մլն դրամ: Բայցեւ նախորդ տարիներից կուտակված պարտքերը հիշ չեն. ավելի քան 13 մլն դրամ, որը կուտակվել է 1991 թ.-ից սկսած: «Գյուղացիները հոսանքի, ջրի, գազի վարձերը բավականին պարտաճանաչ վճարում են: Այլապես կգրկվեն դրանց մատակարարումից: Դժվարությամբ են վճարում միայն հողի հարկը»,- ասաց համայնքապետը: Ս. Խալաթյանի ասելով՝ փորձում են ըմբռնումով մոտենալ, հանդելով հավաքագրել հարկերը, եւ դա արդյունք տալիս է՝ ազատավանցիների շուրջ 50%-ն իր կամքով վճարում է:

«Ավագանու գործունեությամբ գյուղացին հեռատեսվում է, երբ նրան ինչ-որ հարց է անհանգստացնում, այլապես ավագանու նիստ կլինի, թե ոչ՝ հեչ պետքերն էլ չի: Չնայած՝ լինում են դեպքեր, երբ գյուղացիներն էլ են մասնակցում»,- հավաստացնում է համայնքապետը: Վերջինիս ներկայացմամբ՝ բնակչությանը հուզող հարցերին ՏԻՄ աշխատակիցները տեղեկանում են գյուղացիների հետ ամենօրյա շփումների ժամանակ՝ գյուղամիջում, դաշտում, հավաքատեղիներում:

Ազատավանում հիմնարկ-ձեռնարկություններ ընդհանրապես չկան: Համայնքի միակ վարչական շենքը՝ համայնքապետարանը, որն այսօրվա եւ անգամ 70-ական թվականների պահանջներից շատ հեռու մի շինություն է, իր հարկի տակ է պատսպարել իրեն ենթակա եւ ոչ ենթակա բոլոր կառույցները: Այս փոքրիկ շենքի՝ աղաստարան հիշեցնող ներքնահարկում են տեղավորված մշակույթի տունն ու գրադարանը, «Հանրապետական» կուսակցության գրասենյակը: Գյուղն ընդհանրապես մանկապարտեզ չի ունեցել, եւ հիմա համայնքապետարանը 30 մլն դրամ է խնայել մանկապարտեզ կառուցելու համար: Նպաստակին ե՛ւ մոտ են, ե՛ւ հեռու, որովհետեւ իրենց հաշվարկներով եւս 15-20 մլն դրամ է անհրաժեշտ մանկապարտեզը կառուցելու համար: Գյուղի այս տարվա բյուջեն 64 մլն դրամ է անցած տարվա 52 մլն-ի դիմաց, սակայն, բյուջեից մասհանում պետք է անեն «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով որոգման ցանցը վերանորոգելու համար: Շինարարության համար արվելիք ծախսերի 15%-ը, որ գումարային արժեքով դեռ հայտնի չէ, պետք է հատկացնի համայնքը: Ընդ որում, ներհանրապետական ցանցի վիճակն այնքան էլ վատ չէ: Մայր ջրատարից դեպի գյուղ եկող հունը, որը բավականին երկար է, հողից է, ինչի պատճառով էլ ջրի կորուստը շատ է լինում: Ըստ համայնքապետի՝ որոգման համակարգի հետ կապված հարցերը պետք է առաջնահերթ լուծվեն, հանի որ գյուղացու համար որոգման ջուրը ժամանակին ստանալն ու ապրանքը իրացնելը կյանքի խնդիր է:

Խմելաջրի ներհանրապետական ցանցը հին է ու փտած: Գյուղն օրական մի քանի ժամ է ջուր ունենում: Ջուրը հիմնականում մաքուր է, բայց տեղեր կան, որ խողովակների փտածության պատճառով անցքերից հետո դրանք կեղտաջրով են լցվում: Մինչեւ Հայաստանից գալիս, վերանորոգում են՝ մի քանի օր տեւում է: «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրով նախատեսվել է այստեղ նաեւ 5-6 կմ ջրագիծ փոխել:

Մեր այն հարցին, թե հնարավո՞ր չէ համայնքային զարգացման ծրագրերն իրագործելու համար անհրաժեշտ գումարի պակասը լրացնել համայնքին պատկանող հողերի աճուրդվաճառից, համայնքապետը հայտնեց, որ իրենց հողերը մեծ պահանջարկ չունեն: Անցած տարվա ընթացքում մեկ անգամ աճուրդ-վաճառ է տեղի ունեցել, որի ընթացքում վաճառվել է 4 հա հող: Վաճառքի մեկնարկային գինը եղել է կադաստրային արժեքի 50 %-ը՝ 264 դրամ մեկ քառակուսի մետրի համար: Համայնքապետի ներկայացմամբ՝ աճուրդներն այնքան էլ ծեւական չեն: Մեկ հողակտորի համար 3-4 կամ երբեմն մարդ է մասնակցում: Աճուրդի մասին նախապես տեղեկացնում են գյուղում մի քանի տեղ հայտարարություն փակցնելով: Գնորդները հիմնականում գյուղացիներն են: «Վերջին մի քանի տարիներին այստեղ հողի գների որոշակի աճ կա, բայց դա ավելի շատ պայմանավորված է դոլարի կուրսի անկմամբ: Գյուղի կտրվածքով բավականին հարմար տեղում 1000 քմ հողատարածքը հնարավոր է գնել 500-600 դոլարով: Տնամերձ հողամասը՝ նվազագույնը 1000 դոլարով: Եթե մի քանի ծառ էլ տնկված լինի, ավելի թանկ»,-ասաց Ս. Խալաթյանը: Եվ այդ ամենը Արարատյան դաշտավայրի գրեթե կենտրոնում, երեւան-Արտաշատ ճանապարհին, Արտաշատից 1-2 կմ հեռավորության վրա:

ՆԱՐԵԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Նյութը հրատարակվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Սպառվում են թուրքական ժխտողականության դիրքերը

Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը դատապարտող գիտնականներին միանում են հասարակական կազմակերպություններ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը սպառնան եզրին է կանգնեցրել թուրքական ժխտողականության դիրքերը: Թեեւ Թուրքիայի իշխանությունները ժխտողականությունից չեն հրաժարվում, սակայն ճանաչման գործընթացի ծավալումը կասեցնելու հրամայականով անընդմեջ դիմում են անհեռանկարային հակաձայներ: Այս դայմաններում «հայկական ցանցաեւերի» չեզոքացումը որոշս առաջնահերթ խնդիր, անընդմեջ զբաղեցնում է Անկարայի քաղաքական օրակարգը, որը նպաստում է Հայոց ցեղասպանության հարցի ակտիվ արծարծմանը երկրում: Վերարծարծման դայմաններում, ինչ խոսք, աճում է հարցի նկատմամբ հասարակական հետաքրքրությունը, իսկ դա նախադայմաններ է ստեղծում, որ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում դատապարտող առանձին թուրք գիտնականներին միանան նաեւ թուրքական հասարակական որոշ կազմակերպություններ:

Կազմակերպությունների դարագայում խոսքն առաջին հերթին վերաբերում է Մարդու իրավունքների միության Սամսունի մասնաճյուղին, որը Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման օրը կազմակերպել էր սեմինար «Ինչ տեղի ունեցավ ապրիլի 24-ին» թեմայով: **«Ազգը»** ապրիլի 23-ի համարում տեղեկացնելով այդ մասին, նշել էր, որ սեմինարը կազմակերպվում է Սամսունի Բիլգի համալսարանում, աբխազներին կմասնակցի նաեւ Լոնդոնի «Կոմիտաս» ինստիտուտի տնօրեն Ադա Սարաֆյանը:

Լոնդոնաբնակ մեր հայրենակիցը սեմինարի ելույթում, ինչպես նշել են «Միլիեթ» ու «Ռադիկալը», ասել է. «Ապրիլի 24-ը «Իթթիհադ վե Թերաքի» կուսակցության քաղաքական դավադրությունն էր, որը Անատոլիայի հայերի բնաջնջման սկզբնավորումն էր»: Սեմինարը բացել է Մարդու իրավունքների միության Սամսունի մասնաճյուղի ղեկավար Գյուլսերեն Յոլերին: Նա, արձանագրելով այն փաստը, որ առ այսօր Թուրքիան չի ճանաչում հայերի ցեղասպանությունը, ոչ էլ իշխանություններն են հնարավորություն տալիս հարցի քննարկմանը, քննադատել է ժխտողականությունը:

Մարդու իրավունքների միության նախկին փոխնախագահ Էրեն Քեսիքը ավելացրել է. «Մարդիկ չկարողացան ապրել հայրենի հողում, ոչ էլ այնտեղ մեռան: Միմյանց հետ բնամագրին էրին, թուրքին, հային, հույնին, որոնք դրկից հարեւաններ էին: Հարատեւում է իթթիհադական մտայնությունը: Առանց վերանայելու «Իթթիհադ վե Թերաքի», «Թեքիլաթ-ը Մահուսայի», «Էրգենեքոնի» գործունեությունը առաջ գնալ չենք կարող»:

Հայտնի հրատարակիչ եւ մարդու իրավունքների պաշտպան Ռազբի Ձարաքոլուն նշել է, որ ապրիլի 24-ը նախադեմ էր մեր ժամանակներում այլ մտավորականների ձերբակալության համար, ապա եւ շարունակել է. «Երկրում կա տեսանելի եւ անտեսանելի պետություն, առկա է նաեւ «Թեքիլաթ-ը Մահուսան», դեռեւս գործում են օսմանյան պետական ծառայողները, որոնք չեն համակերպվում առի դայմաններին: Մեր հասարակությունը ի վիճակի է համերաբխության հասնել, միայն թե իշխանությունները սպեր չդցեն»:

Ձեկուցողները, ըստ վերոհիշյալ թերթերի, ելույթ են ունեցել ավելի քան 300 հոգանոց լսարանի առջեւ: Թեեւ մասնակիցների ապահովության համար թուրքական ոստիկանությունը խիստ միջոցառումներ է կիրառել, այնուամենայնիվ սեմինարի աբխազները խանգարելու լուրջ փորձեր հավանաբար չեն եղել, այլապես մամուլը կարձագաներ:

Խնդրո առարկա երկրորդ կազմակերպությունը «Առերեսում» միությունն է, որը ապրիլի 24-ին տարածել է «Մեծ եղեռն» վերնագրով հաղորդագրություն: Ի դեմ, Հայաստանի հանրային հեռուստատեսությունը «Հայլուր» ծրագրով անդրադարձավ հաղորդագրությանը: Այդ իսկ դատճառով կարելի էր, իհարկե, խուսափել կրկնությունից, եթե «Առերեսում» միության նախագահ Ցաֆեր Սոլգունի ստորագրությամբ այդ հաղորդագրությունը չտպարկվեր **«Ազգի»** խմբագրություն:

Հաղորդագրության մեջ խստագույնս դատապարտվում է Թուրքիայի ժխտողականությունը, նշվում է, որ անկախ 1915-ի իրադարձություններ բնութագրումից, մի ամբողջ ժողովուրդ անխնա բնաջնջվել է, որի հետեւանքն անգամ չի մնացել աբխարհագրական տվյալ միջավայրում, ապա եւ անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության հարցին, ընդգծելով. «Այս հարցը որեւէ առնչություն չունի «հողային դահանջի», «անջատողականության» կամ մեր ազգին «վիրավորելու» հետ: Դա մարդկության դեմ կատարված հանցագործության նկատմամբ խղճի դրսեւորման եւ արժանապատիվ կեցվածքի հարց է: Դա եղբայրական բարեկամ ժողովրդին դետության եւ թուրք ազգի անունից անկեղծորեն վշտակցելու եւ կատարվածի համար ոչ թե «ներում», այլ տրանց ներողություն խնդրելու հարց է: «Առերեսում» միությունը տրանց վշտակցում է հայ ժողովրդին եւ ժխտողականության անիծումը համարում է մարդկային դարտք»:

Ապրիլի 24-ին Ալի Էրթեմի եւ Բյուլենթ Գյուլի ստորագրությամբ տարածած հաղորդագրությունը **«Ազգի»** խմբագրություն է ուղարկել նաեւ Ֆրանկֆուրտում գործող «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը, որի վերջին 10 տարիներում ավանդույթ դարձած ներկայությունն այս տարի Մեծ եղեռնի հուշահամալիրում ապահովեց գերմանաբնակ գրող, հրատարակիչ Ռեջեփ Մարաալը, մատուցելով հարգանքի տուրք անմեղ զոհերի հիշատակին:

ՀԱՅՈՐ ՇԱՔԱՐՅԱՆ

Մահափորձ Աֆղանստանի նախագահի դեմ

Աֆղանստանի մայրաքաղաք Քաբուլում կիրակի օրն անցկացված զորահանդեսի ժամանակ մահափորձ է ձեռնարկվել նախագահ Համիդ Կարզայի դեմ: Ֆրանսդրեսը հաղորդում է, որ Կարզայի ուղղությամբ հրթիռներ են արձակվել եւ գնդակոծություն է սկսվել այն ժամանակ, երբ նա Քաբուլի կենտրոնում զորքերի սուգաստեղ էր անցկացնում Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման 16-ամյակի առթիվ:

Ազգային օրհներգի ավարտից անմիջապես հետո հրազգություն է սկսվել, հարյուրավոր զինվորներ եւ դաշտոնատարներ փախուստի են դիմել զորահանդեսի վայրից, նշում է Ֆրանսդրեսը: Աֆղանստանի դաշտոնական դետությունը հայտարարել է, որ նախագահ Կարզայն էվակուացվել է եւ չի տուժել գնդակոծությունից: Հաղորդվում է, որ ողջ-առողջ են նաեւ զորահանդեսին ներկա եղած կառավարության անդամները եւ օտարերկրացի դիվանագետները:

Գնդակոծությունից տպանվել է մեկ մարդ, վիրավորվել են տասնմեկ ուրիշներ, որոնց մեջ կան աֆղան զինվորներ:

Հարձակման դատասխանատվությունն անմիջապես ստանձնել է «Թալիբան» շարժումը: «Մենք հրթիռներ արձակեցինք զորահանդեսի մասնակիցների վրա», հայտարարել է թալիբների խոսնակ Զաբիհուլլահ Մուջահեդը, ավելացնելով, որ գլխավոր թիրախը եղել է Համիդ Կարզայը: Հաղորդվում է նաեւ, որ փոխհրաձգության ժամանակ տպանվել են երեք թալիբներ:

Սա առաջին մահափորձը չէ նախագահ Համիդ Կարզայի դեմ: Նա երկիրը ղեկավարում է 2002-ից, բայց դաշտոնատարս Աֆղանստանի նախագահն է 2004-ից: Անցած տարիներին նա բազմաթիվ հարձակումների թիրախ է դարձել, բայց չի տուժել:

Լոնդոնի դատարանի արխիվները ինտերնետում

Լոնդոնի կենտրոնական քրեական դատարանի՝ Old Bailey-ի գործերի արխիվները ապրիլի 28-ից հասանելի են ինտերնետում:

Բրիտանական «Թելեգրաֆ» թերթը տեղեկացնում է, որ համացանցում ստեղծված է www.oldbailyonline.org կայքէջը, որտեղ շարադրված են ավելի քան 210 հազար քրեական գործերի փաստաթղթերը: Դատարանը դադարել է գործել 1674-1913 թթ.:

Դատական արխիվները ինտերնետում տեղադրելը մարդկանց թույլ կտա միանգամայն անվճար օգտվել դրանցից: Կայքէջի փաստաթղթերը վերաբերում են ամենատարբեր գործերի՝ սովորական գողությունից մինչեւ առեւանգումներ եւ սպանություններ:

Մասնավորապես բոլոր ցանկացողները կարող են ծանոթանալ Օսկար Ուայլդի դատավարության նյութերին: Կայքէջը կարող է օգտակար լինել նաեւ տոհմաբանությամբ զբաղվող անձանց համար:

«Վարդյա հեղափոխության» վերջին «փետ՞ը»

Սահակաշվիլին առանց «Պողպատյա լեռների» է գնում ընտրությունների

Կայացող ժողովրդավարություն ունեցող երկրներում խորհրդարանական ընտրությունները բնավ էլ իրականության արտացոլումի չեն, այնուամենայնիվ յուրօրինակ կերպով ներկայացնում են երկրի հասարակության դատկերը: Մայիսի 21-ին վրաց հասարակությունն է ընտրելու իր խորհրդարանականներին, ընդ որում, մինչ այդ արդեն բաս հետաքրքրական զարգացումներ են ընթանում: Վրաստանի դեմքում ընտրական առանձնահատկություններին ավելանում են նաեւ ընդամենը հինգ տարի առաջ իրականացված «վարդյա հեղափոխության» հետեւանքների յուտահատկությունները:

Հետհեղափոխական շրջանում մինչեւ վերջին ամիսները Վրաստանի քաղաքական կյանքում իր ուրույն դերակատարումն ունեցող խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն, խորհրդարանական ընտրություններից առաջ «վարդյա հեղափոխության» երեք առաջնորդներից մեկը դարձած եւ 2007 թվականի նոյեմբերյան քաղաքական ճգնաժամի ընթացքում իր հայտնի Սահակաշվիլուց «Պողպատյա լեռի» անունը սեպագրած Բուրջանաձեն չի ցանկանում մասնակցել ընտրական գործընթացին:

«Մեզ չհաջողվեց կոնսենսուսի գալ կուսակցական ցուցակի ձեւավորման հարցում, ինչից ելնելով ես հրաժարվում եմ մասնակցել խորհրդարանական ընտրություններին», վրացական լրատվամիջոցների փոխանցմամբ, դեռեւս նախորդ շաբաթ նման հայտարարություն է արել Նինո Բուրջանաձեն: Խոսքը երկրի ներկայիս նախագահ Միխեիլ Սահակաշվիլու հետ ընդհանրական «Միասնական ազգային շարժում» կուսակցության ցուցակի մասին է, որով էլ նախորդ ընտրություններում առաջադրվել է Բուրջանաձեն՝ զբաղեցնելով առաջին տեղը, ինչից հասկանալի է, որ ցուցակի բաս այլ տեղերում հայտնված թեկնածուների անունները եւս մեծապես կապված էին խորհրդարանի նախագահի հետ:

Բուրջանաձեի նման հայտարարությունից հետո նրա համախոհների զգալի մասը դուրս է եկել ընտրական կուսակցական ցուցակից, իսկ մեծամասնական ընտրակարգով նրա մտերիմներից ոմանց արդեն իսկ փոխարինել են ուրիշ թեկնածուներ: Իսկ Բուրջանաձեի քաղաքական հետագա գործունեությունն առայժմ չի կապվում ո՛չ ընդդիմության, ո՛չ էլ գործադիր իշխանության հետ, թեեւ հավանական են դիտարկվում երկու տարբերակներն էլ:

Մեկ այլ տարբերակի համաձայն, Բուրջանաձեն կարող է դառնալ Վրաստանի արտգործնախարար կամ ներկայացուցիչ ՄԱԿ-ում, կամ գործունեություն ծավալել որոշս նորաստեղծ քաղաքական կուսակցության ղեկավար: Մինչդեռ նրա նախագահական հավակնությունների մասին էլ բաս է խոսվում, հատկապես որ Բուրջանաձեն այն եզակի մարդն է Վրաստանում, որ երկու անգամ եղել է նախագահի ժամանակավոր պատասխանատար:

Ինչ այս հավակնությունների բավարարման հարցում էլ ժամանակին իր աջակցությունն էր Բուրջանաձեին հայտնել հանգուցյալ Բադրի Պատարկացիվիլին, որը նոյեմբերյան ցույցերի ժամանակ բացահայտորեն հայտարարեց ընդդիմությանը ֆինանսապես սատարելու իր պատրաստակամության մասին, իսկ ավելի ուշ, արդեն նախագահական ընտրություններում առաջադրեց իր թեկնածությունը:

Եվ եթե ներկա դրությամբ Բուրջանաձեի մասնակցության բացառումը խորհրդարանական ընտրություններին գնահատվում է անսպասելի, բայց ուշացած, ապա միասնական ընդդիմության նոյեմբերյան ցույցերի, «Իմեդի» հեռուստաընկերության փակվելու ժամանակ նմանօրինակ քայլն իսկ եւ իսկ կարող էր ամենամեծ իրադարձությունը դառնալ, հատկապես որ ներկա դրությամբ Բուրջանաձեի եւ Սահակաշվիլու հակասությունները բացատրվում են կուսակցական ցուցակի շուրջ անհամաձայնությամբ. իսկ ավելի կոնկրետ՝ այդ ցուցակում քվոտաների բաշխմամբ:

Ամեն դեպքում, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն ավարտել է կուսակցական ցուցակների գրանցումը, «Իմեդի» հեռուստաընկերությունը, որի թերթը անջատված է 2007-ի նոյեմբերի յոթից, պատրաստվում է հաջորդ շաբաթ վերադառնալ եթեր, իսկ միասնական ընդդիմությանն իր ժամանակին եթեր չտրամադրող մեկ այլ խոշոր վրացական հեռուստաընկերություն՝ «Ռուսթավի-2»-ն արդեն երեկվանից դադարեցրել է ընդդիմությանը հայտարարած «բոյկոտը»:

Այս ամենին զուգահեռ եւ Հայաստանի հետ, ցավոք, ընդհանրությամբ, Վրաստանում եւս միջազգային կառույցները բարձրացնում են, այսպես կոչված, ընտրական գործընթացի հանդեպ բնակչության անվստահության հարցը: Մասնավորապես, Եվրոդայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի դիտորդները նախընտրական երկու օրվա դիտարկման արդյունքում «մտահոգության առարկա» են ունեցել հասարակության փոքր վստահությունը ընտրական գործընթացի հանդեպ: Վրաստանում ԵԽԽՎ դատվիրակության ղեկավար Մաթիաս Յորը խորհրդարանական ընտրությունների համատեքստում հիշեցրել է ապրիլի սկզբին ՆԱՏՕ-ի բուխարեստյան գագաթաժողովում ձեւավորված այն մոտեցումը, թե վրաց խորհրդարանական ընտրությունները կարող են լրջագույնս ազդել ՆԱՏՕ-ի անդամակցության ծրագրում Վրաստանն ընդգրկելու հարցի վրա:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

150 մետրից ընկած ամերիկացին ողջ մնաց, բայց կդատվի

Փենսիլվանիայի նահանգի բնակիչներից մեկը ապրիլի լույս 25-ի գիշերը 150 մետր բարձրությունից ընկել է լիքած մի հանքի մեջ եւ ողջ է մնացել, հաղորդում է Ասոշիեյթեդ դրես գործակալությունը:

23-ամյա Նեյթան Բաումանը «Սդրինգդեյլ Փիթ» բաց հանքի մոտ ընկերոջ հետ զբոսնելիս սայթաքել է եւ ընկել փոսը, որի խորությունը 200 մետր է, լայնությունը՝ 450 մետր:

Զգոնությամբ գլորվելուց հետո Բաումանը ցած է ընկել 150 մետր բարձրությունից, հայտնվելով հանքի հատակից ոչ հեռու գտնվող քարե ելուստի վրա: Ընկերն անմիջապես օգնության է կանչել փրկարարներին, բայց մի քանի ժամ տեւած ոռնումներն արդյունք չեն տվել: Առավոտյան ոռնումները դադարեցվել են:

Սակայն հանքի սեփականատեր ընկերության ներկայացուցիչները որոշել են մեկ անգամ եւս գնալ դեպքի վայր եւ գրեթե անմիջապես էլ օգնության կանչեր են լսել: Փրկարարները Բաումանին բարձրացրել են հանքի հատակից եւ հասցրել հիվանդանոց:

Բժիշկների խոսքերով, տուժածի վիճակը ծանր է, բայց վնասվածքների բնույթը դեռ անհայտ է: Փրկարարները նշեցրել են, որ Բաումանը բազմաթիվ մանր կոտրվածքներ է ստացել:

Նա կդաշինվի, բայց ստիպված կլինի դատարան ներկայանալ ապորինաբար մասնավոր տարածք հանքի մտած լինելու մեղադրանքով:

Կես դարից ավելի

Լրացավ լուսահոգի, գրականագետ, պատմաբան, հասարակական-գիտական գործիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, «Համո Սահյան գիտամշակութային կենտրոն» ՀԿ նախագահ Շյուրա Դավթյանի ծննդյան 70-ամյակը:

- Ինչպե՞ս եք գնահատում Ձեր անցած 70-ամյա ճանապարհը: Այդ տարիներից 54-ը եղել են աբխազանիային, որը կես դարից ավելի է:

- Այդ ճանապարհը սկսվել է դառնությամբ: Երբեմն տարեկան էի, երբ սկսվեց պատերազմը: Հայրս, որ կադային զինվորական էր, մեկնեց ռազմաճակատ եւ մեզմ էջմիածնից տեղափոխվեցինք Գորիս: Մայրս չէր հաստատվում կերակրել ու խնամել չորս անչափահաս երեխաներին: Շատ մեծ դժվարություններ կրեցինք: Հետո մեզ տեղափոխվեցինք Սիսիան, որտեղ անցան մանկությունս ու պատանեկությունս: 16 տարեկանից բանվորություն եմ արել, հետակա ավարտել եմ Երեւանի հանրակրթական բանասիրական ֆակուլտետը, աշխատել տարբեր հիմնարկներում: 30 տարեկանում նշանակվել եմ երգանային «Ռուսան» թերթի խմբագիր, այդպես անցել կուսակցական աշխատանքի: 1988-90 թթ. եղել եմ «Խորհրդային Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր: Աշխատեցի՝ փախստականներին ուղղված «Հայրենի տուն» եւ «Խաչմերուկ» թերթերի խմբագիրը, աշխատել գյուղատնտեսությունում:

Դժգոհելու առիթ չունեմ եւ կարծում եմ, որ միգուցե եմ անցել ճանապարհով ինձ բաժին հասած ճանապարհը:

- 25 տարուց ավելի է, որ զբաղվում եք հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի գրական ժառանգության ուսումնասիրությամբ եւ մեկնությամբ: Մի՞թե չի սպառվում Ձեզ հետաքրքրող նյութը:

- Երբեմն չի սպառվելու, որովհետեւ սահմանագիտությունը շատ մեծ բնագավառ է: Այն ընդգրկում է ոչ միայն նրա բանաստեղծական աշխարհը, այլեւ այն բազմակողմությունը, որով Համո Սահյանի ճառերությունը հայ գրականության մեջ դարձավ ուղղություն: Մեր գիտամշակութային կենտրոնը երեք ուղղություններով լուրջ աշխատանք է կատարում՝ մեծ բանաստեղծի գործերի վերահրատարակում, նրա ստեղծագործությունների գիտական արժեքորում, նրա հիշատակի հավերժացմանն ուղղված գործունեություն: Բավական է նշել, որ կազմվել են նրա մասին եւ իր գրած հոդվածների ժողովածուներ, իսկ անհիմ բանաստեղծությունների «Ինձ բացակա չգնեք» գիրքը պատրաստվում եմ հրատարակել չորրորդ անգամ:

- Ավելի քան 30 տարի աշխատել եք գյուղական շրջանում: Ինչպե՞ս եք գնահատում հայ գյուղի վիճակն այսօր:

- Գյուղի վիճակը, հատկապես լեռնային շրջաններում, ողբալի օրհասական է: Խոսքը միայն նյութականի մասին չէ, այլ ավելի շատ՝ ժողովրդագրական տեղաշարժերի: Սեւականաշնորհումն հետեւանով մեծ չափերով կրճատվեց անասնագլխաքանակը, վարելահողերի կեսից ավելին չի օգտագործվում, ամառային արոտները լքված են: Այսինքն հողը չի կարողանում լիարժեք կերակրել գիրոցը: Սիսիանում 1988-ին եղել է 45 հազար խոշոր եւ 130 հազար մանր եղջերավոր անասուն: Այժմ 45 հազարը իջել է 19-ի, 130 հազարը՝ 20-ի: Ծնունդները տարեցտարի պակասում են, մահացությունը՝ ավելանում: 2007-ին նույն Սիսիանում ծնվել է 210 երեխա, մինչդեռ 1979-88 թթ.այդ թիվը հազարից չի իջել:

Գյուղերից եւ նախկին շրջկենտրոններից բնակչության արտահոսքը չի դադարում, որովհետեւ հողի հետ աշխատելը դժվարացել է տեխնիկայի պակասության, վառելանյութի, պարարտանյութերի, ջրի թանկության, ոռոգելի հողերի կտրուկ կրճատման եւ էլի մի շարք պատճառներով:

Վերջերս գյուղնախարարը հայտարարել է, թե հեկտարից 30 ցենտներ հացահատիկ ստանալու դեպքում, Հայաստանը իրեն հացով կապահովի: Իհարկե, 50 ցենտներ ստանալու դեպքում Վրաստանին էլ կապահովի: Հայաստանը երբեմն 30 ցենտներ բերք չի ստացել անգամ այն ժամանակների ցանքաշրջանառության, բույսերի պաշտպանության, պարարտացման, մեխանացման եւ մասնագիտական բարձր մակարդակի պայմաններում: Թող գյուղնախարարությունկոչվածը խնդիր դնի գոնե Հայաստանի հողերը մի անգամ ամբողջությամբ հերկելու, մի անգամ բողջությամբ ցանելու, մի անգամ էլ ամբողջությամբ հնձելու համար:

- Որքա՞ն 40 տարվա լրագրող, ինչ կարծիք ունեք Հայաստանի ԶԼՄ-ների մասին:

- Իրոք, այս տարի լրանում է ժուռնալիստների միության անդամ դառնալու իմ 40 տարին: Այդ ընթացքում չդիտեմ, թե քանի հարյուր հոդված եմ գրել, սակայն ճշմարտս զգացել եմ որ լրագրողական աշխատանքը ամենակարեւոր մասնագիտություններից է:

Անկեղծ ասած, ԶԼՄ-ներից դժգոհ եմ հենց այն պատճառով, որ մի շարք թերթեր ու հեռուստաալիքներ ոսնահարում են այդ կարեւորությունը: Կողմնապահ են, եսասեր, չհանդուրժող, չափի զգացողությունից զուրկ, սենսացիաների սիրահար, կովարար, լուսաբանվող թեմաներին չհիրադեպող: Մինչդեռ լրագրողը միայն մի բանի պետք է հետաքրքրի լինի՝ ճշմարտությանը:

Ինչպես թերթերը, այնպես էլ հեռուստաալիքները պետք է ձգտեն բարձրացնել ընթերցողների ու հեռուստադիտողների մակարդակն ու ճաշակը, եւ ոչ թե իրենք իջնեն ու հարմարվեն նրանց ճաշակին: Իսկ ոմն է հետաքրքրվում գովազդի մակարդակով: Ինչո՞ւ պիտի, օրինակ, տնային խալաթով մեկը օրական մի քանի տասնյակ անգամ հայտարարի, թե «բոլորս կախված ենք մի կում հանքային ջրից»: Ինքը կարող է կախված լինել, բայց ինչո՞ւ է բոլորի անունից խոսում:

Եվ այդպես շարունակ: 1990-ի օգոստոսի 23-ին ընդունվեց անկախության հռչակագիրը, որի դրույթներից մեկը՝ խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, հաղորդակցությունն էր, սակայն հենց այդ օրերին սկսեցին ինձ հալածել: Ես էլ միամտորեն հռչակագրին հավատացել էի:

- Քաղաքականությունից վաղուց հեռացել եք: Մտքն է դրա պատճառը: Մի՞թե հաղորդակցությունը Ձեզ չի հետաքրքրում:

- Քաղաքականությունից ես չհեռացա, ինձ ուղղակի սիրեցին, որպեսզի հեռանամ: Սիրեցին, որ թողնեմ թերթի խմբագրի պաշտոնը: Հայտարարեցին, թե եկել է ազատականությունը, սակայն չհանդուրժեցին որեւէ ընդդիմություն կամ այլախոհություն, անգամ ընդդիմախոսություն: 70 տարվա տերությունը վանեցին մեզանից եւ այլոց, որպեսզի իրենք որեւէ պատասխանատվություն չվերցնեն: Նախարարներ ու շրջանների ղեկավարներ նշանակվեցին գորից անտեղյակ, անփորձ, չհասունացած, անկիրթ ու ամբարտավան մարդիկ, որոնք դարձան ոչ միայն հարյուր հազարավոր հայերի Հայաստանից հեռանալու, այլեւ բազում դժբախտությունների պատճառ: Եվ քանի որ քաղաքականության մեջ թույլ տրված սխալներն ինչ լարոր ունեն, այլ կարող են միայն կրկնվել, ուստի ստեղծվեց այն վիճակը, ինչին ականատես ենք բոլորս:

Ինչպես գիտեք, հաղորդակցությունն ասածը շատ մեծ ընդգրկում ունի: Մեզանում այդ տերմինի տակ շատ հաճախ հասկանում են միայն զանգվածային հաղորդակցությունը, մինչդեռ կան, ասենք, արտաքին հաղորդակցություն, տնտեսական հաղորդակցություն, ագրարային հաղորդակցություն, նաեւ՝ կադային հաղորդակցություն եւ այլն: Կարծում եմ հաղորդակցը նա է, ով լիովին տիրապետում է նշանակ հաղորդակցություններից որեւէ մեկին: Նշեցի, որ գյուղի վիճակը լավ չէ, ինչո՞ւ: Որովհետեւ ագրարային ճշգրիտ հաղորդակցություն չի իրականացվում: Ինչո՞ւ մի քանի դեսպաններ իրենց խայտառակեցին, որովհետեւ ոչ միայն արտաքին, այլեւ իրենց երկրի ներքին հաղորդակցությունից բան չէին հասկանում: Եթե հաղորդակցությունը գործի չվերածվեց, արդեն ոչ թե հաղորդակցություն է, այլ շաղակրատություն:

- Եվ մի վերջին հարց: Ինչպե՞ս եք նշելու Ձեր ծննդյան 70-ամյակը:

- Ամենասովորական ձեւով. ընկերների եւ ընտանիքի անդամների շրջապատում՝ Երեւանում եւ Սիսիանում: Միայն մի բացառություն: Իմ վաղեմի բարեկամներ եւ ընկերներ, հայ ադեսի մեծեր Հովհաննես Չելեբյանը, Էդուարդ Թադեւոսյանը եւ Էդուարդ Տեր-Ղազարյանը գտնում են, որ կամերային երաժշտության տանը իրենց մասնակցությամբ համերգ-միտի կազմակերպվի՝ երաժշտության եւ գրականության փայլատակումներով: Ես էլ սիրով/կլինեմ այդ միջոցառման ունկնդիրներից մեկը:

Հարցազրույցը վարեց
ՏԻԳՐԱՆ ՂԱԼԱՍԱՐՅԱՆԸ

Ուշադրության դրվագ մանկապատանեկան արվեստին

Այս տարի ՀՀ մշակույթի նախարարությունը նախաձեռնել է կազմակերպել մանկապատանեկան արվեստին նվիրված մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակությանն եւ բարձր ճաշակի ձեւավորմանը:

Այդ շարքից է «Երեխաների մեծերի ճանապարհը» խորագիրը կրող ցուցահանդեսը, որը կկայանա օգոստոսին Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում: Հայաստանաբնակ պատանիներն ու երեխաներն էլ կմասնակցեն այդ մրցույթին: Հանրապետական ցուցահանդես-մրցույթում 271 աշխատանքից հաղթածներին հավանության է արժանացել 50 ստեղծագործություն, որոնք էլ կներկայացվեն սեուլյան մրցույթին: Հարավային Կորեայում ցուցադրվելուց հետո հավաքական ցուցահանդեսը կներկայացվի նաեւ Ճապոնիայում եւ Գերմանիայում:

Մանկապատանեկան արվեստին նվիրված միջոցառումների շարքից նաեւ «Սոթեղանի» երգչախմբի համերգ-ցուցահանդես փառատոնը, որը նույնպես տեղի ունեցավ Նարեկացի արվեստի միությունում: Երգչախումբը ստեղծվել է 1996-ին եւ յուրօրինակ դերակատարություն ունի Հայաստանի մշակութային կյանքում: «Սոթեղանին» համերգներով շրջագայել է Լիբանանում, Հռոմում, Միլանում, Արցախում, 2004-ին արժանացել է Արեցցոյի (Իտալիա) խմբերգային երաժշտության 52-րդ միջազգային մրցույթի երկրորդ մրցանակին: Մայիսի 26-ին էլ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ մանկական երգչախմբի համերգը, որին զուգահեռ ցուցադրվեցին նաեւ երգչախմբի սաների նկարչական աշխատանքները, որոնք բացահայտում են պատանի երգիչների ինքնատիպ կերպարները: «Սոթեղանին» երկրաբաժի 20-ամյա տարելիցին նվիրված համերգային ծրագրով հանդես կգա Գյումրիում եւ Վանաձորում:

ՀԵՍՈՒՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարդու արած գործն է մարդու արժեքը

Հայկական գեղանկարչության մեջ Վլադիմիր Մարգարյանի (Վալմար) անունը հայտնվեց 70-ականների սկզբին, երբ Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի սան, երվանդ Քոչարի աշակերտը արվեստասեր հասարակությանը ներկայացավ իր յուրօրինակ ներաշխարհով: ՀՀ վաստակավոր նկարիչ Վալմարը թեւակոխում է իր կյանքի 6-րդ տասնամյակը: 1972-ից առ այսօր նկարչի բուռն ստեղծագործական գործունեությունը դրսեւորվել է 40 անհատական եւ 120 խմբակային ցուցահանդեսներով, որոնք կազմակերպվել են Հայաստանում, Ռուսաստանում, Մերձբալթյան երկրներում, նաեւ Եվրոպայի, ԱՄՆ-ի ու Կանադայի մի շարք հաղթների մշակութային կենտրոններում եւ պատկերասրահներում: Վալմարի ստեղծագործությունները ցուցադրվում են Հայաստանի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի պատկերասրահներում եւ թանգարաններում, իսկ 1000-ից ավելի ստեղծագործություններ գտնվում են տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում: ՀՀ Անկախության 15-ամյակի առթիվ Վալմարին շնորհվել է ՀՀ վաստակավոր նկարչի կոչում եւ «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալը: Նկարչի հոբելյանի կապակցությամբ, «Ազգը» կարճ զրույց ունեցավ:

- Հետաքրքիր եք բաժանվում ձեր կտավներից:

- Իհարկե ոչ, գործեր ունեմ, որ ոչ մի կերպ չեմ վաճառի եւ մոտավորապես տարին հինգ աշխատանք առանձնացնում եմ իմ սեփական արխիվի համար: Դրանք կդառնան թանգարանային նմուշներ: Ըստ իս, նկար գնելն ամուսնության պես մի բան է, պետք է նկարից էներգիա ստանաս եւ ուզենաս դա տուն տանել: Եթե նկարի մեջ ոգի եւ խորություն չլինի, շուտ կհիասթափվես եւ նկարը պատից կիջեցնես: Նկարելիս ես չեմ մտածում վաճառելու մասին, բայց, իհարկե, չեմ կարող հերքել, որ շատերը: Քոչարի տված դասերը, փիլիսոփայությունը, ճշմարտի ու անկեղծության արվեստի ընկալման չափանիշները եւ սերը մեծ դեր ու նշանակություն են ունեցել: Շատ բան եմ ստացել Գառզուից, ժան Սեմից... Շատ են նրանք, ովքեր ինձ համար եղել են հոգեւոր ներշնչանքի աղբյուր ինչ-որ կերպ:

- Ինչն է ձեզ ներշնչում:

- Դրական էներգիա եմ ստանում երաժշտությունից, իմ շուրջը եղած ամեն ինչ ինձ ստեղծագործելու, մտորելու հնարավորություն է տալիս: Բոլոր դեպքերում հարկավոր է մթության մեջ լույս տեսնել եւ գնալ դեպի լույսը՝ ձիշտ կողմնորոշվել...

Վալմարի ստեղծագործությունների ցուցահանդեսը, նվիրված նկարչի 60-ամյակին, կբացվի Ազգային պատկերասրահում մայիսի 2-17-ը, որը կազմակերպել է ՀՀ մշակույթի նախարարությունը: Ցուցահանդեսին ներկայացված կլինեն տարբեր ժամանակների մոտ 12 կտավներ, որոնք նկարիչը վրձնել է իր ստեղծագործական 40 տարիների ընթացքում:

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Ցերչիլի գեղանկարը աճուրդում

Քաղաքական կարիերայում անհաջողություններից սկիզբ առած դեպրեսիան Ցերչիլին մղեց այլ ոլորտում ինքնադրսեւորվելու, եւ հաղթական գործիչը վրձինը ձեռն առավ: Առաջին անգամ 1915-ին Ցերչիլն իր մեջ հայտնաբերեց նկարչին: Իսկ նրա գործերից երկուսը առաջին անգամ աճուրդով վաճառվեցին նախորդ տարի 1 եւ 2 միլիոն դոլարով: Օրերս Նյու-Յորքի աճուրդում 420 հազար դոլարով վաճառվել է 1935-ին՝ արձակուրդի ժամանակ, Մառոկկոյում Ցերչիլի հեղինակած «Արեւամուտը Ասլասի լեռներում» կտավը: Reuters-ի տեղեկացմամբ, հայտնի հայտնի հայտնի:

Ն. Պ.

Վերսալյան շատրվանները խնայողաբար կգործեն

Վերսալյան հռչակավոր շատրվանները առաջիկա 5 տարիներին կնորոգվեն: Նորոգումը կարժենա 20 միլիոն ֆունտ ստեռլինգ: Նոյաակը ջուրն ավելի խնայողաբար օգտագործելն է: Այդ ուղղությամբ մասնագետների նախկինում գործադրած ջանքերը անօգուտ են եղել: Եվ ներկայում շատրվանները մեկ ժամում օգտագործում են 4,5 հազար լիտր ջուր: Ինչպես տեղեկացնում է The Telegraph-ը, նորոգումը հնարավորություն է ընձեռելու 1,6 միլիոն խմ ջուր խնայելու՝ ի հաշիվ անձրեւաջրերի: Ներկայում Վերսալյան շատրվանները բաղդ հիդրավլիկ համակարգով սնուցվում են Սենա գետից:

Ն. Պ.

«Արարատն» ու «Միկան» շարունակեցին հաղթարշավը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 3-րդ տուրում կենտրոնականն Աբովյանում «Արարատի» եւ «Բանանցի» միջեւ կայացած խաղն էր: Գավաթի եզրափակիչի մասնակիցները վճռորոշ հանդիպումից առաջ հնարավորություն ունեցան ծանոթանալու միմյանց: Երկու թիմերն էլ ակտիվ խաղ ցուցադրեցին: Խաղային որոշ առավելությունն արարատցիների կողմն էր, որոնց գոհերն ավելի վտանգավոր էին:

Առթն 7-րդ րոպեին Մարկոսի տուգանային հարվածից հետո «Արարատը» կարող էր բացել հաշիվը, սակայն հարվածը մի փոքր բարձր սացվեց: Հյուրերն էլ վտանգավոր գոհ ձեռնարկեցին 18-րդ րոպեին: Աջ թեւից Գյոզալյանը գնդակը հասցեագրեց տուգանային հրապարակ, որտեղից Ջլաթելը փորձեց խոցել դարպասը, սակայն հաջող խաղաց «Արարատի» դարպասապահ Նիկոլայ Սարգսյանը: Այնուհետեւ երկու անգամ հաջողությանը մոտ էր արարատցի Սարգիս Մովսիսյանը: 28-րդ րոպեին եռակայլ կոմբինացիայից հետո Մովսիսյանը հարմար դիրքից վրիպեց, իսկ ինչ անց կրկին հայտնվեց հարվածային դիրքում, սակայն այս անգամ դարպասապահ Մաստուքինը հեռ մղեց գնդակը:

Դեռ նոր էր սկսվել 2-րդ խաղակեսը, երբ անկյունային խաղարկումից հետո Մովսիսյանը գրավեց դարպասը: Այդ գոլն էլ վճռեց հանդիպման ելքը: Մնացած ժամանակահատվածում թեեւ «Բանանցը» շատ ջանքեր գործադրեց, սակայն արարատցիները հմտորեն էին պաշտպանվում եւ կարողացան խաղը հասցնել հաղթական ավարտի: Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Վարուժան Մուքիասյան («Արարատ»)-Ճնշեր խաղ էր: Երկու թիմերի ֆուտբոլիստներն էլ հոգնած էին, չէին հասցրել վերականգնել ուժերը գավաթի կիսաեզրափակիչ դարպասխան հանդիպումներից հետո: Ցորտոցյա ցիկլով խաղալը շատ դժվար է: Դաշտում ավելի շատ տակտիկական պայքար էր ընթանում: Երեւի մենք ավելի հաջողակ գտնվեցինք: «Բանանցը» լավ համալրված կոլեկտիվ է, ծանոթացել էինք թիմի լեգեոնականների խաղին, որոնք բավական վտանգավոր են գործում: Մեր պաշտպանությունը գեղազանց գործեց՝ հնարավորություն չտալով մրցակցին լրջորեն սպառնալ դարպասին: Տղաների խաղից գոհ եմ:

Նեղելյո Մաուրեւ («Բանանց»)-Շնորհավորում եմ «Արարատին»: Այսօր լավ խաղ ստացվեց: Հաջողությունն «Արարատ» կողմն էր, որը մեկ գոլ խփեց ու հաղթեց: Մեր թիմը չկարողացավ ցուցադրել իրեն հատուկ խաղը: Այս ուղղությամբ դեռ շատ աշխատանք պետք է տանել: Նոր ֆուտբոլիստներ կան, որոնց ժամանակ է անհրաժեշտ կոլեկտիվին մերվելու համար: Առայժմ նրանք կայուն ելույթներով աչքի չեն ընկնում:

Անսպասելի արդյունք գրանցվեց Կաղանում, որտեղ «Գանձասարը» 1-3 հաշիվով զիջեց «Միկային»: Հյուրերը դեռեւս առաջին խաղակեսում 3 անգամ գրավեցին մրցակցի դարպասը՝ վճռելով խաղի ելքը: Հաշիվը 16-րդ րոպեին բացեց «Գանձասարի» նախկին ֆուտբոլիստ Ամոն Պետրոսյանը, արդեն 2 անգամ աչի ընկավ Նարեկ Բեգլարյանը: Միայն խաղի վերջին րոպեին Արսեն Ավետիսյանին հաջողվեց «թրջել» հաշիվը: Ներկայում «Գանձասարում» մեծ թվով լեգեոնականներ են հանդես գալիս: Ինչպես ցույց է տալիս թիմի մեկնարկը, առայժմ այդ խաղն իրեն չի արդարացնում: 3 հանդիպումներում կարողացիներն ընդամենը մեկ միավոր են վաստակել:

Առաջին հաղթանակը տոնեց «Ուլիսը»՝ խոշոր հաշվով (3-0) պարտության մատնելով «Կիլիկիային»: «Ուլիսի» կազմն այդ խաղում ամառանոցել էին «Միկայի» փորձառու ֆուտբոլիստներ Արայոր Աղամյանն ու Տիգրան Դավթյանը: Վերջինս նորամուտը գոլով նշեց: Մյուս երկու գոլերն իրենց օգտին գրանցեցին Արթուր Քոչարյանն ու Արթուր Բարսեղյանը:

Առաջնությունում անդրանիկ պարտությունը կրեց երկրի չեմպիոն «Փյունիկը»: Սեփական հարկի տակ փյունիկցիները 0-2 հաշվով զիջեցին «Շիրակին»: Չեմպիոնը առաջինը հնարավորություն ուներ բացելու հաշիվը, սակայն 21-րդ րոպեին Սարգիս Հովսեփյանը չհաջողեց 11 մ հարվածը: Իսկ ահա գյումրեցիներն իրենց հնարավորությունը ձեռից բաց չթողեցին: Ցորտ րոպե անց նոսմ սացան 11 մ հարվածի իրավունք, որը Անդրանիկ Բարիկյանը հստակ իրացրեց: Ընդմիջումից ինչ անց Արարատ Հարությունյանն ամրագրեց «Շիրակի» հաղթանակը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արարատ	3	3	0	0	8-0	9
2. Միկա	3	3	0	0	9-2	9
3. Շիրակ	3	2	0	1	5-4	6
4. Փյունիկ	3	2	0	1	2-2	6
5. Ուլիս	3	1	0	2	3-3	3
6. Գանձասար	3	0	1	2	2-5	1
7. Բանանց	3	0	1	2	0-2	1
8. Կիլիկիա	3	0	0	3	0-11	0

Ռմբարկուները

Նարեկ Բեգլարյան	«Միկա»	5
Մարկոս	«Արարատ»	3
Սարգիս Մովսիսյան	«Արարատ»	3

Ձեւ N7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑԻՈՒ
սահ 01.01.2008 թ.

Կազմակերպության անվանումը «Վեռանի» ՍՊԸ
Փաստացի գտնվելուն Դարանական ամառանոց խճուղի
Պետական գրանցման համար 26413006869
Հարկ վճարողի հաշվառման համար 00086076
Տարածք Մարզ հատ. գրամ
Գործունեության տեսակը
Փաստացի գտնվելուն Հասցե
Իրավաբանական վայրը Կոտայքի մարզ, գյուղ Ծաղկունք Հեռախոս 091 46 23 46

ԱՌԴԻՐ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	4147	4147
Մնացորդային արժեքներ	080	4147	4147
II. Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	290	3055	5431
Մնացորդային արժեքներ	220	3055	5431
ԱԿՏԻՎՆԵՐԻ	230	7522	9598

ՊԱՍԻՎՆԵՐ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Լրամշակումների (լրամիտակների) կապիտալի գծով փոփոխություններ	240	50	50
Գրանցված տարեսկիզբ	270	772	8041
Մնացորդային սեփական կապիտալ	300	822	8090
V. Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ կրեդիտորական պարտքերի գծով	410	1384	1417
Պարտավորություններ կրեդիտորական պարտքերի պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	74	91
Կրեդիտորական պարտքեր աշխատանքի եւ արտադրամասերի հետ կատարվելիք հաշվարկների գծով	430	221	-
Այլ կրեդիտորական պարտքեր	450	5021	-
Մնացորդային ընթացիկ պարտավորություններ	490	6700	1508
ԱԿՏԻՎՆԵՐԻ	500	7522	9598

Ձեւ N2

ԲԻՆԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2007 թ., տարի

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անորակ)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անորակ)
1	2	3	4
Սարքերի, սարքավորումների, գործիքների իրացումից եկամուտ	010	5632	41401
Բարձրի արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից ինքնարժեք	020	(798)	(10912)
Համախառն շահույթ (վնաս)	030	4834	30489
Վարչական ծախսեր եւ հոսք	050	(2891)	(16200)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	1943	14289
Գործառնական այլ եկամուտներ, այլ բացեր	080	(830)	(22)
Գործառնական շահույթ (վնաս)	090	1110	14267
Ոչ շահույթ (վնաս) հարկման շահույթահարկի գծով ծախսերի նկատմամբ	160	1110	14267
Ոչ շահույթ (վնաս) շահույթահարկի գծով ծախսի նկատմամբ հետո	180	1110	14267

ՀԱՍՍԱՐԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՕՐԱՆՈՒՇՈՒՄ

ՀՀ քննչական հանձնաժողովի նախագահության ՀՀ լրիվ մեծամասնության կազմավորման գործընթացի կապակցությամբ եւ ՀՀ լրացուցիչ օրենքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների համաձայն, ծանուցվում է «Հայաստանի ԳԵՐԵՎԻ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պարկի հանձնելի վարչական ատանոցում գտնվող «Բանանց» ՍՊԸ-ի Արովյանի «Ռազի սատերկա ոչխարանոց» կոչվող անշարժական գույքատեսակ գնելու մրցույթ հրավիրելու մասին հայտարարությունը (հրապարակված՝ Կառավարական 3-րդ տոմ, 5-րդ հատոր, 541 մեծաչափ):

Հասանելիությունը կողմից փաստաթղթի նախնական ատերտակի լրումը տեղի կունենա 2008 թ. մայիսի 6-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տոմ, 5-րդ հատոր, 541 մեծաչափ:

ՀՀ քրեական դատարանների կառավարման գործակալություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների գործարարներին եւ կազմակերպություններին

Սլովակիայի առեւտրային բանկերը Հայաստանի եւ Արցախի գործարարներին եւ կազմակերպություններին տրամադրում են բիզնես վարկեր՝ ՀՀ եւ ԼՂՀ-ում գործող տնտեսադրամական հատույցներից էապես ցածր տոկոսներով:

Վարկի մարումը սկսվում է ձեռնարկությունից մեկ տարի անց: Մարման ժամկետը մինչեւ հինգ տարի:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 54-89-36, կամ (094)366-989 հեռախոսահամարներով:

ՀԱՅԱՍՏԱՆ

Արթուր Աբրահամին մեղադրում են բռնաբարության մեջ

Սենսացիոն եւ իրոք անհավանական լուր է տարածել «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթը, տեղեկացնելով, որ IBF-ի վարկածով միջին քաշում աշխարհի ներկայիս չեմպիոն Արթուր Աբրահամը մեղադրվում է բռնաբարության համար: Ըստ թերթի, դեռեւս տեղի է ունեցել Հվեյցարիայի հյուրանոցներից մեկում, որտեղ իջեւանել էր Արթուրը՝ նախապատրաստվելով էլվիս Այալայի հետ մենամարտին: Ենթադրյալ տուժողը հյուրանոցի աշխատակցուհին է:

Ըստ թերթի, ոստիկանությունն արդեն քրեական գործ է հարուցել, հետաքննություն է անցկացնում, հարցաքննում է վկաներին: Բնականաբար, Արթուրը հերքել է իր հաղթերին հնչած մեղադրանքը՝ նշելով, որ հաճախել է սաունա եւ ոչ մի հակաօրինական բան չի կատարել: Արթուրն այժմ կրկին Հվեյցարիայում է եւ պատրաստվում է հունիսի 21-ին ԱՄՆ-ում էդիսոն Միրանդայի հետ ռեւանշ-մենամարտին: Ինչ խոսք, ենթադրյալ բռնաբարության մեղադրանքը մեծ խոչընդոտ կլինի նախապատրաստական աշխատանքի արդյունավետ կազմակերպման հարցում: Եվ որքան շուտ պարզվի ճշմարտությունը, այնքան շատ ժամանակ կունենա Արթուրը առաջիկա մենամարտին հաջող նախապատրաստվելու համար:

Դանիելյանն ու Մովսիսյանը գլխավորում են աղյուսակը

Շախմատի եվրոպայի առաջնության առաջատարներից մեկը՝ Սերգեյ Գրիգորյանցը, որ յորս տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքի էր հասել, հաջորդ երեք տուրերում չափազանց անհաջող հանդես եկավ եւ զիջեց դիրքերը: 5-րդ տուրում նա սեւերով զիջեց Սերգեյ Մովսիսյանին, հաջորդ պարտիայում էլ պարտվեց Պավել Տրեգուբովին եւ միայն 7-րդ տուրում իր օգտին կես միավոր գրանցեց՝ ոչ-ոքի խաղալով Գագիր Հուսեյնովի հետ:

7 տուրից հետո հայ շախմատիստներից լավագույն ցուցանիշն ունի Սերգեյ Մովսիսյանը, որը 6 միավորով էնիլ Սուտովսկու եւ Պավել Տրեգուբովի հետ գլխավորում է աղյուսակը: Մովսիսյանը հաղթեց նաեւ Յան Վեռլենին եւ ոչ-ոքի խաղաց Սուտովսկու հետ:

Հայաստանցի շախմատիստներից 5 միավոր է վաստակել Վլադիմիր Հակոբյանը: Նա հաջողություն կնվեց Սերգեյ Ազարովի եւ Սթելիոս Հալկիասի հետ ու հաղթեց Լուկա Լենիլին: Տիգրան Քոչանջյանը, Կարեն Ասրյանն ու Գաբրիել Սարգսյանը վաստակել են 4,5-ական միավոր: Քոչանջյանը հաղթեց Դանիել Լինդեւկուն, ոչ-ոքի ավարտեց Բարիկյանի, Ասրյանը նախ հաջողություն կնվեց Զովանովիչի ու Վուչկովիչի հետ, առաջ հաղթեց Սուսկիսին: Նույնքիսի սցենարով անցան նաեւ Գաբրիել Սարգսյանի պարտիաները: Նա ոչ-ոքի ավարտեց մրցախաղերը Սուսկիսի եւ Սթայնգրիմսոնի հետ, առաջ հաղթեց Մարինին: Տիգրան Պետրոսյանն ու Սամվել Տեր-Սահակյանն ունեն 4-ական միավոր: Անասասյանի օգտին գրանցված է 3,5 միավոր: Մինասյանը վաստակել է 3, Հարությունյանը՝ 2,5 միավոր:

Կանանց մրցաշարում մեր շախմատիստուհիներից լավագույնը էլինա Դանիելյանի արդյունքն է, որն ունի 5,5 միավոր եւ յոթ շախմատիստուհիների հետ գլխավորում է աղյուսակը: Էլինան ոչ-ոքի խաղաց Հոուակայի հետ, այնուհետեւ հաղթեց Աթալիկին ու Պետրոսին: Առաջատարներին կես միավոր է զիջում Լիլիթ Մկրտչյանը, որը հաղթեց Սեթոլուային, ոչ-ոքի ավարտեց պարտիաները Հոանգի եւ Ջավախիշվիլու հետ: 4 միավոր է վաստակել Լիլիթ Գալոյանը, 3,5՝ Սիրանուշ Անդրեասյանը: 3-ական միավոր ունեն Նելլի Աղինյանը եւ Աննա Հայրապետյանը:

Խաղադաշտում մանկական երեխաներն են

«Հրազդան» մարզահամալիրի տնօրենության, Հայաստանում Բրազիլիայի դեսպանատան, «Սադիա» ընկերության, ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայի եւ ուսանողական ջոկատների հանրապետական ջանքի աջակցությամբ ու հովանավորությամբ անցկացվեց «Մանկաբոլ-2008» անվանումը կրող ֆուտբոլի մրցաշար 8 թիմերի մասնակցությամբ: Դրանցից չորսը ներկայացնում էին երեւանի «Ձայիկ», Աբովյանի «Սուս Կինդերդորֆ», Գյումրիի եւ Դիլիջանի մանկատների թիմերը: Մյուս մասնակիցներն էին Բրազիլիայի եւ Արգենտինայի ինտերնացիոնալ թիմերը, մանկատներում ապրողներից կազմավորված «Հայ բարեկամներ», ինչպես նաեւ «Հայ աղջիկներ» թիմերը:

Խաղերն անցկացվեցին «Հրազդան» մարզադաշտում: Երկու ենթախմբերում էլ համառ պայքար ծավալվեց: Առաջին ենթախմբում 7-ական միավոր էին վաստակել «Ձայիկ» ու Դիլիջանի թիմը: Խփած եւ բաց թողած գնդակների լավագույն տարբերության շնորհիվ եզրափակիչ մտավ «Ձայիկը»: Մյուս ենթախմբում 6-ական միավոր էին վաստակել Արգենտինայի, «Հայ աղջիկներ», «Հայ բարեկամներ» թիմերը: Այստեղ լրացուցիչ ցուցանիշներով եզրափակիչի ուղեգիր նվաճեց «Հայ բարեկամներ» թիմը:

Եզրափակիչ խաղում գրանցվեց ոչ-ոքի (1-1): 11 մ հարվածաշարով 4-2 հաշվով հաղթեց «Ձայիկը»: «Հրազդան» մարզադաշտի տնօրեն Հարությունը Քեհեյանը պատվավոր գավաթը հանձնեց հաղթող թիմին: Ինֆոֆի կողմից էլ նվերներ հանձնվեցին առանձին մասնակիցների, որից հետո հյուրասիրություն կազմակերպվեց երեխաների համար: Մրցաշարի պատվավոր հյուրերի թվում էին Հայաստանում Բրազիլիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռենատ Սիլեն եւ «Սադիայի» ներկայացուցիչ Ռոյ Զիրկան:

Շախմատի միջազգային մրցաշար Գյումրիում

Անցած ուրբաթ օր Գյումրիում մեկնարկել եւ հաջողությամբ ընթանում է շախմատի միջազգային բավական ուժեղ մրցաշար Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Վրաստանի մարզիկների մասնակցությամբ: Հանրապետության երկրորդ քաղաքում առաջին անգամ անցկացվող այս բարձրակարգ (10-րդ կարգի) մրցաշարի 12 մասնակիցներից 5-ը միջազգային գրոսմայստերներ են, 6-ը միջազգային վարպետներ, իսկ Գյումրին ներկայացնում է վարպետության թեկնածու Դավիթ Քալաբյանը: Մասնակիցների միջին գործակիցը 2487 է, ամենաբարձր վարկանիշն ունի վրաց գրոսմայստեր Թամազ Գելաշվիլին (2622): Մրցումների արդյունքներով սահմանված է գրոսմայստերական նորմա:

Առաջին երեք տուրերից հետո մրցաշարում ամենից շատ՝ 2,5-ական միավոր վաստակել եւ արդյունքը գլխավորում են գրոսմայստերներ Թ. Գելաշվիլին ու Արման Փաշիկյանը: 2-ական միավոր ունեն ուկրաինացի Եվգենի Վորոբյովը, վրաստանցի մեր հայրենակից Գեորգի Բագասուրովը եւ Լեւոն Բաբուջյանը: Երեկ յոթերորդ տուրում հանդիպում էին Բաբուջյան-Գելաշվիլի, Արթուր Գաբրիելյան (ՌԴ)-Հրանտ Մելիումյան, Բագասուրով-Ալեքսանդր Զուբարեւ (Ուկրաինա), Փաշիկյան-Արման Հայրապետյան, Հայր Սիմոնյան-Վորոբյով եւ Քալաբյան-Արթուր Ծիրուխյան զույգերը:

Ընդամենը կխաղացվի 11 տուր, մրցաշարը կավարտվի մայիսի 6-ին:

Գ. Մ.

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ ՅԱՆՈՒՑՈՒՄ

VIVAcell

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն պայմանագիր կնքելու իրավունքով հայտարարում է «Օպտիկամանրաթելային մալուխի մատակարարման, տեղադրման եւ միացման նպատակով» գնային առաջարկների հավաքագրում

Պահանջվող տվյալների բուկլետը կարող եք ստանալ ներքոհիշյալ կոնտակտ անձից:

Առաջարկների ընդունման սկիզբ-սկսած հայտարարության օրվանից
խորհրդակցությունների եւ պարզաբանումների վերջնաժամկետ-07/05/08
Առաջարկների ընդունման վերջնաժամկետ-12/05/08, 18:00

Օրիգինալ առաջարկն ու պատճենը պետք է ներկայացվեն հետեւյալ հասցեով՝ Երեւան, Արգիշտի 4/1, «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, գնումների բաժին, սենյակ 416, պարոն Կարապետ Ասատուրյանին

Կազմակերպիչ-«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, գնումների բաժին

Կոնտակտ անձ՝ պարոն Կարապետ Ասատուրյան, հեռ. 093 298547, ֆաքս 093 298420
էլ. հասցե՝ gasadurian@vivacell.am

Այս հայտարարությունը կրում է ինֆորմացիոն բնույթ եւ չի հանդիսանում պարտադիր օֆերտա: «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն չի կրում որեւէ պարտավորություն հայտ ներկայացնող կազմակերպությունների հետ պայմանագիր կնքել:

Մրցույթի հրավեր 046/08

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ ալեղաց գնելու համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am վեբ կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում: Դիմել Գրիգոր Սիմոնյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ մայիսի 12, ժամը 17:00

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 կից բնակարաններ Մալաթիա-Նովա 3 շենի առաջին հարկում՝ օտերայի հարեւանությամբ:

Ընդհանուր մակերեսը 150մ. է, առաստաղի բարձրությունը 4.50մ է: Հարմար է օգտագործել որպես օֆիսային տարածք, ռեստորան կամ խանութ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել (094)36-69-89 հեռախոսահամարով:

Մեկ N1

ԲԱՂԱՆՍԱԳԻՐ ԲԱՂԱՆՍԻ
առ 01.01.2008 թ.

Կազմակերպության անվանումը «Գիր Գասպարյան» ՍՊԸ
Փաստացի գտնվելու վայրը
Պետական հաշվառման համար 27480242
Հարկ վճարողի հաշվառման համար 29011000416
Ծածկագիր 01827869
Գանձապետական վարչություն
Փաստացի գտնվելու վայրի համայնք
Իրավաբանական վայրը Ք. Երեւան, Մեծարենցի 40ա
Հայտ դրած հեռախոսը
Կոորդ. ծառ. պրոֆ. Ռուբեն,
Տնտեսագետ ծառ. պրոֆ. Սուրենյան
Հեռախոսահամար 093 89 75 64

ԱՌԴԻՐ	տող	Նախորդ տարվա վերջին վիճակով	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին վիճակով
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ			
Ոչ նյութական ակտիվներ	010	44	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	020	10000	6875
II. Ընթացիկ ակտիվներ	090	10044	6875
Նյութեր			
Դեբիտորական պարտքեր	180	8500	8500
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	946	5776
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	13445	13776
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	20531	20651

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին վիճակով	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին վիճակով
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի գրանցված գումար	240	7092	7092
Չգանձված մուծում	270	1296	1300
Ընդամենը սեփական կապիտալ	300	8138	8392
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ ոչ բանկերից	410	2415	2321
Կարճաժամկետ փոխառություններ պարտատոմսերի գծով	420	137	137
Ստացվելիք առեւտրային պարտքեր	450	9841	9841
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	12393	12299
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	20531	20651

Մեկ N2

ԲԻՄԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԲԱՂԱՆՍԱԳԻՐ
2007 թ., տարի

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջանի տվյալներով)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջանի տվյալներով)
1	2	3	4
Առեւտրային, արտադրական, ապրանքաշրջանառության ծախսերից հետո	010	45284	50687
Բացառիկ արտադրական, արտադրական, ապրանքաշրջանառության ծախսերի գումարը	020	(10147)	(9906)
Ֆինансային գործառնություններից գումար (վնաս)	030	35117	40779
Արտադրական հարկեր եկամտի	050	(31676)	(27440)
Առեւտրային, արտադրական, ապրանքաշրջանառության ծախսերը (վնաս)	060	3441	13339
Ֆինансային այլ եկամուտներ, այդ թվում	080	(3300)	(13125)
Ֆինансային գործառնություններ (վնաս)	090	111	214
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի գծով հաշվետու ներդրումներ	160	111	214
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի գծով հաշվետու ներդրումներ հետո	180	111	214

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (այսուհետ՝) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/21» թանկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«Պետության կարիքների համար անհրաժեշտ ֆնտեսական ապրանքների ձեռքբերման» գնման պայմանագիր կնքելու նպատակով**: Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արտինվեստբանկ», ՀՎ 247230066158 «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանային օրվա ընթացքում դիմել պայմանագրին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար է Բուռնուկյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանային օրը, ժամը 16:00:

Մեկ N1

ԲԱՂԱՆՍԱԳԻՐ ԲԱՂԱՆՍԻ
առ 01.01.2008 թ.

Կազմակերպության անվանումը «Հայկան» ՍՊԸ
Փաստացի գտնվելու վայրը
Պետական հաշվառման համար 27111003235
Հարկ վճարողի հաշվառման համար 01240282
Ծածկագիր 39221987
Գանձապետական վարչություն
Փաստացի գտնվելու վայրի համայնք
Իրավաբանական վայրը Ք. Երեւան, Մատենադարան 179
Հայտ դրած հեռախոսը
Կոորդ. ծառ. պրոֆ. Ռուբեն,
Տնտեսագետ ծառ. պրոֆ. Սարգսյան
Հեռախոսահամար

ԱՌԴԻՐ	տող	Նախորդ տարվա վերջին վիճակով	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին վիճակով
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010		112
Ոչ նյութական ակտիվներ	030		5000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	040		5112
II. Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200		349
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220		349
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230		5461

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին վիճակով	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին վիճակով
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի գրանցված գումար	240		50
Չգանձված մուծում	270		3178
Ընդամենը սեփական կապիտալ	300		3228
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ ոչ բանկերից	410		95
Կարճաժամկետ փոխառություններ պարտատոմսերի գծով	420		138
Կարճաժամկետ փոխառություններ բանկերից	440		2000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490		2233
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500		5461

Մեկ N2

ԲԻՄԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԲԱՂԱՆՍԱԳԻՐ
2007 թ., տարի

Ցուցանիշի անվանումը	տող	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջանի տվյալներով)
1	2	4
Առեւտրային, արտադրական, ապրանքաշրջանառության ծախսերից հետո	010	32090
Բացառիկ արտադրական, արտադրական, ապրանքաշրջանառության ծախսերի գումարը	020	(4412)
Ֆինансային գործառնություններից գումար (վնաս)	030	22678
Արտադրական այլ եկամուտներ, այդ թվում	080	(3000)
Արտադրական գործառնություններ (վնաս)	090	22678
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի գծով հաշվեկշիռ	160	22678
Հաշվետու ժամանակաշրջանի գծով հաշվեկշիռ	170	19500
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի գծով հաշվեկշիռ հետո	180	3178

USAID FROM THE AMERICAN PEOPLE
COMMUNITY CONNECTIONS

Համայնքային կապեր

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) եւ Փրոջեքթ Հարմոնի կազմակերպությունը սիրով հայտարարում են Համայնքային կապեր ծրագրի շրջանակներում **«Տուրիզմը՝ որպես առարկա դասավանդողների փոխանակում»** մասնագիտական թեմայի մեկնարկը:

Ծրագիրը հայ մասնագետներին տրամադրում է երեք շաբաթ տեւողությամբ վերապատրաստման եւ մշակութային փոխանակման հնարավորություններ ԱՄՆ-ում: Ծրագրին կարող են դիմել տուրիզմը՝ որպես առարկա դասավանդող դասախոսներ հետեւյալ բուհերից՝ Ռուս-հայկական պետական սլավոնական համալսարան, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Տուրիզմի հայկական ինստիտուտ, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Երեւանի պետական հումանիտար քոլեջ, Երեւանի Զբոսաշրջության, տպատակման եւ սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ, Երեւանի պետական համալսարան եւ նրա Իջեւանի մասնաճյուղ:

Ծրագրի հետ կապված բոլոր ծախսերը հոգում է ԱՄՆ ՄԶԳ-ը: Բաց մրցույթյան արդյունքում տարը մասնագետներ 2008թ. սեպտեմբերին կնքելու են ԱՄՆ, որի ընթացքում կբնակվեն ամերիկյան հյուրընկալող ընտանիքներում:

Անգլերենի իմացությունը պարտադիր չէ:

Դիմելու վերջնաժամկետն է՝ 2008թ. մայիսի 12-ը, ժ. 18:00

Հայցադիմումները կարող եք վերցնել հետեւյալ հասցեում՝

Պարոնյան 8/8, Երեւան, Հայաստան, 0015, Փրոջեքթ Հարմոնիի գրասենյակում կամ ինտերնետային կայքում՝ www.ccarmenia.am.

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Նունե Ամիրյանին կամ Քրիստինե Ճգնավորյանին հետեւյալ հեռախոսահամարով՝ 538676/538257

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սեղմերային աշխատասենյակների ավտոմատ հրթիռաշիջման մոդուլային համակարգի աշխատունակության վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով (դեմոնտաժ-մոնտաժ) կազմակերպության ընտրության համար կազմակերպվող հրապարակային մրցույթի մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սեղմերային աշխատասենյակների ավտոմատ հրթիռաշիջման մոդուլային համակարգի աշխատունակության վերականգնման աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2008թ. մայիսի 26-ին, ժամը 17-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2008թ. մայիսի 29-ին, ժամը 17-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է հունիսի 2-ին, ժամը 17-00:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Տեղեկատվության եւ տեխնիկական միջոցների պաշտպանության վարչություն՝ հեռ. 52-48-81, ներքին՝ 17-30:

ԿԲ մամուլի ծառայություն

Լուսանկարները՝ Արեւմուտքին հանձնաժողով՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Ցուցանիշների պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Սեթիանն: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 28.04.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2